

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՍԱՍՈՒԼ

ԼԱՊԻ ԲԱՆ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ, ԹԵ՞ ՎԱՏ

Չնայած արդէն տասներկու տարի ժողովրդավարութիւնը մեր երկրի Սահմանադրութեան առաջին յօդուածի առանցքային տերմինն է, բայց այդ բառը մեզանում չարունակում է արհամարհուած մնալ: Ընդ որում, խօսքը ոչ թէ իշխանական, այլ ժողովրդական մակարդակի մասին է:

Ասենք, թաղի գրուցարանում մէկը մի յիմարութիւն կ'անի ու շրջապատի զարմացած հայեացքին ի պատասխան կ'ասի՝ ինչ է, հիմա մեզ մօտ դեմոկրատիա է: Այսինքն՝ դեմոկրատիան մեզանում ընկալուած է որպէս սեփական յիմարութիւններին գոյութեան իրաւունք տալու մեխանիզմ:

Յիմարութիւնը ամենամեծ ղեկավարն է, բայց ամբողջ ինդիւրն այն է, որ ամէն ինչ սկսուած է առաջին հայեացքից անմեղ թուացող բաներից: Եւ ուրեմն, այստեղ անցում կատարենք բանավիճակին լաւերժական թեմաներից մէկին՝ լա՛ւ բան է ժողովրդավարութիւնը, թէ՞ վատ:

Այս հարցին պատասխանելու համար պէտք է մի փոքր ճշգրտում անենք, որովհետեւ ժողովրդավարութիւնը, որպէս տեսութիւն, չի կարող գնահատուել առանց գոյութեան արեալի:

Նկատի ունեմ, որ «լա՛ւ բան է ժողովրդավարութիւնը, թէ՞ վատ» հարցը նոյնքան անհեթեթ է, որքան, օրինակ, «լա՛ւ բան է ֆուտբոլը, թէ՞ վատ» հարցը: Որպէսզի այս հարցին պատասխանենք, պէտք է նկատի ունենանք կոնկրետ թիմի խաղ կամ կոնկրետ ազգային առաջնութեան որակ: Ասենք, եթէ Իսպանիայում ֆուտբոլն այնպիսի

նութիւնը հասել է կենցաղային մակարդակի. եթէ մեր արած խորովածը մի փոքր լաւ է ստացուած, քեֆն էլ յաջող է անցնում, Հայաստանը դառնում է աշխարհի ամենալաւ երկիրը, ուղղակի դրախտավայր:

Եթէ մեր երեխան քննութիւննից կտրուում է, մեր փնտռածը ատոմային ուժմբ է, որ Հայաստանը երկրի երեսից վերացնենք: Սա նոյնկերպ եւ արտայայտուած է քաղաքական մակարդակում. 1991 թուականին Հայաստանի բնակչութեան 99 տոկոսը քուէարկեց Հայաստանի անկախութեան օգտին: Բայց երբ հասկացան, որ անկախութիւնը վարդազոյն հեքիաթ է, եւ դա պատասխանատուութիւն եւ աշխատանք է պահանջում, սկսեցին հայհոյել անկախութիւնը:

Նաեւ այս տարօրինակ ամպլիտուդն է պատճառը, որ մենք մեր քաղաքական-քաղաքացիական պայքարի հիմքում դրել ենք մի սկզբունք՝ երբեք չյուսահատուել եւ երբեք չոգեւորուել: Հայկական ժողովրդավարութեան յաջող դասը հետեւեալն է. մենք կա՛մ ի վիճակի չենք որոշումներ կայացնել, կա՛մ ի վիճակի չենք կայացնում որոշումները կեանքի կոչել, այսինքն՝ պատասխանատուութիւն կրել դրանց համար:

Սա վերաբերում է առաջին հերթին անհատական մակարդակին, որտեղից էլ աւելի ընդհանրական է դառնում: Իսկ ի՞նչ է որոշում կայացնելը՝ ըստ հուժեան սեփական ցանկութիւնները, ծրագրերը, մղումները ճշգրտել, ապա եւ կեանքի կոչելու մեխանիզմ: Ու քանի որ մենք նման պրոբլեմ

ՀՈԳԵՈՐԱՆ ԱՐԳԵԼՈՒԱԾ ԶԷ

Մեր համայնքում յայտնուել է աղանդաւոր քարոզիչ: Մօտ 50 տարեկան, լայնեզր ծղօտէ գլխարկով այդ կինը մի քանի գիրք ձեռքին շրջում է Բաղրամեան, կոմիտասի եւ յարակից փողոցներով, բարեհամբոյր ժպտում է բոլոր անցողիներին եւ ոմանց հետ փորձում է գրոյցի բռնուել: Նոյն կինը թակել էր նաեւ իմ բնակարանի դուռը, որը, սակայն, արագ փակեցի՝ տեսնելով, թէ ով է թակողը: Բայց, ընդհանրապէս, ես չգիտեմ, թէ ինչպէս է պէտք վարուել նման դէպքերում: Վէճի բռնուել՝ իմաստ չեմ տեսնում, հայհոյել՝ դատարարակութիւնս չի ներում: Եւ իմ այդ չճշդուած վարքագիծը պայմանաւորուած է լրդուած օրէնքով: Երբ երթուղային տաքսու վարորդը ծխում է, ես կարող եմ նրան ասել՝ «գիտէք, օրէնքը թոյլ չի տալիս ձեզ հասարակական վայրերում ծխել»: Վարորդն էլ կամ կը պատասխանի՝ «դուրդ չի գալի՝ ի՞նչ», կամ էլ փնթփնթալով կը գցի ծխախոտը: Բայց ես չեմ կարող ասել այդ կնոջը՝ «օրէնքն արգելում է ձեզ քարոզել», որովհետեւ նա ժպտալով կը ինդիւրի ինձ ցոյց տալ օրէնքի այդ կէտը: Իսկ հիմա համեմատե՛ք այն վնասը, որն ուղեւորները երթեկեկելու ընթացքում կրում են ծխող վարորդից, այն վտանգի հետ, որին ենթարկուած է չկոփուած հոգին՝ այս կնոջ հետ շփուելու ժամանակ:

Այնինչ, օրէնքը պէտք է շատ յստակ ձեւակերպումներ ունենայ՝ «հասարակական վայրերում կրօնական քարոզչութիւնն արգելուած է», «հոգեորան արգելուած է»: Ընդ որում, վերջին նորմը պէտք է տեղ գտնի նաեւ Քրէական օրէնսգրքում: Այդ դէպքում, յիշեալ կնոջը տեսնելով քարոզչութիւն անելիս՝ ես հանգիստ խղճով կը կարողանամ

դիմել ոստիկանութիւն, թող այնտեղ բացատրութիւններ տայ, իսկ յետոյ՝ դատուի: Կարծում եմ, որ դա ամենեւին չի հակասում ժողովրդավարական սկզբունքներին ու եւրոպական չափանիշներին: Հաւատո՞ւմ ես քո Եհովային, հաւատա՞ ինչքան ուզում ես, քեզ դրա համար ոչ ոք չի հետապնդի, աղօթի՞ր քո տանը, քո կազմակերպութեան աղօթատեղիներում, բայց քեզ ոչ ոք թոյլ չի տալիս գնալ մանկական այգի, հաւաքել անչափահաս երեխաներին եւ նրանց վզին փաթաթել քո հաւատքը: Նոյն վերաբերմունքը, ի դէպ, պէտք է լինի նաեւ արվամոլների նկատմամբ. թէ ում ես դու քո տանը սիրում՝ դա քո անձնական գործն է, բայց մի՛ փորձիր քո այդ հակումները ի ցոյց դնել նորմալ մարդկանց շրջանակում, քանի որ այդ դէպքում խախտելու ես այդ մարդկանց իրաւունքները:

Միայն օրէնքով, իհարկէ, հարց չի լուծուի: Բերեմ այդ նոյն կնոջ օրինակը: Օրերս Մերգեյեանի այգում նա իր շուրջն էր հաւաքել մի քանի երեխայի եւ շատ քնքուշ ձայնով խօսում էր Քրիստոսի, բարութեան եւ «նոր կեանքի» մասին: Երեխաները բերանները բաց լսում էին: Յետոյ եկաւ մի սղամարդ եւ սկսեց գոռգոռալ երեխաների վրայ՝ արգելելով նրանց մօտ գալ այդ կնոջը: Հասկանալի է այդ մարդու տագնապը: Բայց երբ մենք՝ «հայ քրիստոնէաներս», երեխաների հետ շփուում ենք գոռալով, իսկ նրանք՝ քնքուլթեամբ, դա մեր օգտին չի խօսում: Իսկ ինչո՞ւ մենք մեր շուրջը չենք կարողանում հաւաքել երեխաներին ու մի բան էլ մենք պատմենք: Ախ, հա՛, մոռացայ, մենք շատ զբաղուած ենք:

ԱՐԱՄ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱԻՕՏ»

Հասել ենք Հայաստանի վերախորհրդայնացման կարեւորագոյն փուլին՝ իշխանութիւնը մարդկանց փոխարէն սկսել է որոշել ամէն ինչ

բան է, առանց որի ապրել չի կարելի, Հայաստանում առանց ֆուտբոլի հաստատ կարելի է ապրել, որովհետեւ մեր երկրում ֆուտբոլն այնքան չի զարգացել, որ մեր կեանքի անբաժանելի մասը դառնայ:

Նոյնկերպ եւ՝ լա՛ւ բան է ժողովրդավարութիւնը, թէ՞ վատ: Այս նոյն հարցի պատասխանը կարելի է տալ նոյն երկրների օրինակով: Եւ ուրեմն, ժողովրդավարութիւնը լաւ բան է, որովհետեւ իւրաքանչիւր ազգի, ժողովրդի իրեն ճանաչելու եւ այդ ճանաչումից հետեւութիւններ անելու, դատարարակուելու հնարաւորութիւն է տալիս: Եւ այդ պարագայում, ո՞րն է, ուրեմն, «հայկական ժողովրդավարութեան» 20-ամեայ գոյութեան դասը:

Հետեւութիւն առաջին. մենք արագ ոգեւորուող եւ արագ յուսահատուող ժողովուրդ ենք, եւ այս զգացողութիւնների ձեւաւորման արագութիւնը մեզ թոյլ չի տալիս ընկալել օբիեկտիւ իրականութիւնը: Ոգեւորութեան պահին մենք իրականութիւնը տեսնում ենք վարդազոյն, իսկ յուսահատութեան պահին՝ սեւ: Ու քանի որ մենք միջին ինչ-որ վիճակ չունենք, մեզ համար օբիեկտիւ իրականութիւնը կա՛մ վարդազոյն է, կա՛մ էլ սեւ: Եւ ընդ որում՝ այս մօտեցումը, հոգեբա-

ունենք, մեր ցանկութիւնները, ծրագրերը, մղումները շատ յաճախ մնում են անկատար, ու որ կարելոր է՝ չձեւակերպուած:

Համոզուած եմ, ձեզից իւրաքանչիւրն ընտանեկան, բարեկամական շրջապատում բազմիցս լսած կը լինի խօսակցութիւններ այն մասին, թէ ինչը ինչպէս պէտք է անել եւ որտեղ ինչը պէտք է փոխել կամ նորոգել: Այդ խօսակցութիւնները շատ հետաքրքիր են, բայց դրանց 90 տոկոսը հենց այդպէս էլ խօսակցութիւն է մնում:

Իհարկէ, նման վիճակի համար միշտ էլ պատճառ կը գտնուի, եւ որ կարելոր է՝ այդ պատճառները կը լինեն օբիեկտիւ: Իսկ ընդհանրապէս, այս երկու հետեւութիւնների համադրումը տալիս է մեր այսօրուայ իրականութեան ամփոփ նկարագիրը: Նաեւ խօսում է այն մասին, թէ ինչու են մարդիկ շատ դէպքերում սիրում խորհրդային բռնատիրութիւնը: Պատճառը շատ պարզ է՝ այդ տարիներին որոշումներ կայացնելու եւ այդ որոշումներին պատասխանատուութիւնը կրելու անհրաժեշտութիւն չկար: Դու անգամ չպէտք է մտածէիր աշխատանքի գնալու մասին, որովհետեւ եթէ չգնայիր, քեզ կը բռնէին ու կը տանէին աշխատանքի: Այն ժամանակ քո փոխարէն ամէն ինչ պետութիւնն էր որոշում. նա որոշում էր,

թէ ինչ հազուատ պէտք է դու հագցնես քո երեխային, ինչ երգեր նա պէտք է սովորի, եւ որ հերոսները իրեն պէտք է դուր գան, իսկ որոնք պէտք է լինեն հակահերոսներ:

Այն ժամանակ պետութիւնը մեր փոխարէն որոշում էր, թէ ինչն է լաւ, ինչն է վատ, ինչն է սխալ եւ ինչն է ճիշդ: Եւ ահա, արագ ոգեւորուելուց յետոյ մեր ժողովուրդը նաեւ արագ յուսահատուեց, որովհետեւ նա չէր սպասում, որ ժողովրդավարութիւնը իւրաքանչիւր քաղաքացու վրայ այդքան մեծ պատասխանատուութիւն է դնում:

Ու հիմա մենք հասել ենք Հայաստանի վերախորհրդայնացման կարեւորագոյն փուլին՝ իշխանութիւնը մարդկանց փոխարէն սկսել է որոշել ամէն ինչ:

Ու եթէ Սերժ Սարգսեանն իրագործի նաեւ իր դարակազմիկ թէզը, թէ մարդկանց սոցիալական վիճակն աւելի կարելոր է, քան մարդու իրաւունքները, մենք կը ստանանք մի վիճակ, որ պետութիւնը մարդկանց փոխարէն կը սկսի որոշել՝ սովա՞ծ է ինքը (մարդը), թէ՞ կուշտ, լա՛ւ է ապրում, թէ՞ վատ: Դժուար չէ կուսակցի, թէ այս հարցին ինչպիսի պատասխան կը տայ Սերժը, եւ թէ ում ժողովուրդը շնորհակալութիւն կը յայտնի այդքան ուրախ, չաղ ու բախտաւոր կեանքով ապրելու համար:

Ն.Փ. «ՀԱՅՎԱԿԱՆ ՃԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՄՍԿՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ ԱՐԸԱԿ ՊԱՁԱՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ՝ ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՎԱՁԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Դեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Նոր ժամանակներ» կուսակցությունը եւս նախագահական ընտրություններին կը մասնակցի սեփական թեկնածուով. այս մասին Յունիս 18-ին յայտարարություն է տարածել կուսակցությունը: Կուսակցության այս որոշումը պայմանաւորուած է նաեւ խորհրդարանական ընտրություններում արձանագրած յաջողություններով:



«Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեան

«Կուսակցությունը համոզուած է, որ ՀՀ-ում Մայիսի 12-ին կայացած ԱԺ ընտրություններն անցել են նախապէս ծրագրուած, մասնաւորապէս ՀՀ ընտրական օրէնսգրքում համապատասխան փոփոխությունների միջոցով զանգուածաչին, կոպիտ խախտումներով, մեծաքանակ ընտրակեղծիքներով, հետեւաբար չի ընդունում դրանց արդիւնքները:

Արդար ընտրությունների դէպքում ՆԺԿ-ն կը յայտնուէր խորհրդարանում՝ ունենալով ամենամեծ խմբակցություններից մէկը», - ասուած է յայտարարության տեքստում:

«ՊԵՏՔ Է ԱԲԵԼԻ ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԶԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հայաստանում խորհրդարանական ընտրություններից յետոյ երկրի եւ մեր առջեւ դրուած խնդիրների լուծման հարցում ոչինչ չի փոխուել եւ քաղաքական պայքարը ոչ միայն նոյն տեմպով պէտք է շարունակել, այլ ինչքան հնարաւոր է ակտիվացնել հասարակութեանը», - «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց «Իմպիւլս» դաշինքի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինեանը: Նա մեր խնդրանքով պատասխանեց «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Սուրէն Սուրճեանցի յայտարարութեանը, թէ իրենք անհրաժեշտ են համարում դադար տալ հանրահաւաքներին:



«Իմպիւլս» դաշինքի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինեան

«Իմպիւլս» դաշինքի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինեանը քաղաքականութեան մէջ եւ չեմ ցանկանում, որ այդ կանտոնը նաեւ մեր դէպքում աշխատի», - ասաց Նիկոլ Փաշինեանը: Իսկ կախուած նրանից՝ հանրահաւաքները միասին կ'արուեն, թէ ոչ, իմպիւլսեանականների կարծիքը կամ վերաբերմունքը տուեալ քաղաքական ուժի նկատմամբ չի փոխուի: Իսկ Սուրէն Սուրճեանցը, ինչպէս ցանկացած մարդ, ունի կարծիք ունենալու եւ յայտնելու իրաւունք, - այս մասով իր խօսքն աւարտեց Նիկոլ Փաշինեանը:

Փաշինեանը տեղեկացրեց, որ «Իմպիւլս» շարունակելու է բակային հանդիպումները, այցելու թիւները մարզեր եւ հանրահաւաքները: Իսկ մեր հարցին, թէ նշանակուած է արդեօք, որ յաջորդ հանրահաւաքին հարթակում կարող է լինել միայն «Իմպիւլս», Փաշինեանը չի շեղուցրեց, որ հանրահաւաքները միշտ չէ, որ եղել են համատեղ, եւ երբ ինքը ելոյթ է ունենում «Ազատութեան» հրապարակում, դա անում է, որովհետեւ չի կարող չանել, որովհետեւ ասելիք կայ, եւ կարեւոր չի, թէ հարթակում ով կայ կանգնած:

Նիկոլ Փաշինեանը նկատեց, որ տարածուած կարծիք կայ, թէ քաղաքական գործիչները ժողովրդին չիշուծ են միայն ընտրություններից ընտրություն, «Ես նոր եմ մտել

«ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ» ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԶԱՆՐԱՅԱԲԱՔՆԵՐԸ

«Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Սուրէն Սուրճեանցն այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ անդրադարձել է «Իմպիւլս» դաշինքի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինեանի նախաձեռնութեանը՝ հանրահաւաք անել նոյնիսկ մէկ քաղաքացու համար: Նա յայտարարել է, որ հանրահաւաքները չեն կարող մէկ հոգու անձնական գործ լինել. «Հանրահաւաքներն այն բոլոր մարդկանց գործն են, ովքեր հաւաքում են հրապարակում: Ուղղակի շարժման ղեկավարներից մէկը Նիկոլ Փաշինեանն է», - ասել է Սուրճեանցը: Սուրճեանցի տեղեկացմամբ «Հանրապետություն» «Իմպիւլս» վերջին հանրահաւաքին չի մասնակցել ոչ թէ քաղաքական տարածաշրջանների, այլ տեխնիկական պատճառներով: Սուրէն Սուրճեանցը դժուարացել է ասել, թէ որքան կը շարունակուեն հանրահաւաքները, սակայն կարծում է, որ ճիշդ կը լինի մի փոքր դադար առնել՝ «նոր մտտեցումներով հասարակութեանը ներկայանալու համար»:

ՐԱՅՅԻ ՅՈՎՅԱՆՆԻՍԵԱՆԸ ԱՌԱՋԱԴՐԵԼ Է ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ժառանգութիւն» կուսակցության նախագահ եւ Ազգային ժողովում կուսակցության խմբակցության ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեանը կիրակի օրը մեծամասնական ընտրակարգով պատգամաւորութեան թեկնածու է առաջադրուել թիւ 15 ընտրատարածքում:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեցին ընտրատարածքային ընտրական յանձնաժողովից, առաջադրման փաստաթղթերը ներկայացրել են 11 թեկնածուներ, այդ թւում՝ Րաֆֆի Յովհաննիսեանը:

«Մենք հաստատ չաղթելու ենք: Մենք ունենք մեր խմբակցությունն ամբարշտելու ինդիք եւ առիթը բաց չենք թողնելու դա անելու համար: Այս առաջադրումը չի պարտադրում վայր դնել մանդատը, ուստի նոյնիսկ պարտութեան դէպքում մենք ոչինչ չենք կորցնի», - «Ազատութիւն» ռադիոկայանին այսօր ասաց Րաֆֆի Յովհաննիսեանը: Յատկանշական է, որ թիւ 15 ընտրատարածքում առաջադրուել է

Խաչիկ Մանուկեան անուն-ազգանունով երեք թեկնածու, այդ թւում՝ այդ ընտրատարածքում յաղթած, իսկ այնուհետեւ մանդատից հրաժարուած թեկնածու Խաչիկ Մանուկեանը:

Իր թեկնածութիւնն առաջադրել է նաեւ Թալինի քաղաքապետ Մնացական Մնացականեանը, ով Մայիսի 12-ի քուէարկութեան արդիւնքներով, ձայների շատ փոքր տարբերութեամբ էր գիշել Խաչիկ Մանուկեանին: Անկուսակցական Մնացականեանին խորհրդարանական ընտրություններում սատարում էր «Բարգաւաճ Հայաստան» կուսակցությունը:

Առաջադրուած թեկնածու ունի նաեւ ՀՀԴ-ն: Պատգամաւորական մանդատի համար կը պայքարեն նաեւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան Արմաւիրի մարզային վարչութեան պետի տեղակալը, նախկին «Օրինաց երկիր»-ի պատգամաւոր Մեխակ Միսիթարեանը:

Ընտրությունները նախատեսուած են Օգոստոսի 26-ին:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ «ՇԱՅԱՍԱՆ» ԸՆԿԵՐԱՅԿԱԿԱՆ ԸԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՈՊԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԱԸ

Երեւանում կայացաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ամենամեայ նիստը: Այն այս տարի համընկել է հիմնադրամի գործունէութեան 15-ամեակի հետ:

Ներկաները մէկ ըրոպէ լուծեցին յարգեցին խորհրդի անդամներ՝ ՀՀ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարեանի ու բարերար վարուժան Դորմանեանի յիշատակը:

Հոգաբարձուների խորհրդի կազմը համալրուեց երկու անդամով. միաձայն քուէարկութեամբ ի պաշտօնէ հոգաբարձուների խորհրդի անդամ ընտրուեցին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանը եւ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսեանը: Խորհուրդը միաձայն ընդունեց նաեւ Հնչակեան կուսակցության ներկայացուցչի փոփոխութեան առաջարկը. կուսակցության կենտրոնական վարչութեան որոշմամբ խորհրդի անդամ վարդան Եղազեանին կը փոխարինի Արա Պոյաճեանը:

Հիմնադրամի 2006թ. գործունէութեան հակիրճ հաշուետուութիւնը ներկայացուեց տեսաֆիլմի միջոցով: Այնուհետեւ նիստի մասնակիցները դռնփակ քննարկեցին հիմնադրամի գործադիր վարչութեան հաշուետուութիւնը, վերատուգիչ յանձնաժողովի եզրակա-



ցութիւնը, Հայաստանի սահմանամերձ գիւղական շրջանների, ԼՂՀ Մարտակերտի եւ Հաղբու զիւղատնտեսութեան զարգացման ծրագրերը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը Նաիրա Մելքումեանին ազատել է հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնից: Նոր գործադիր տնօրէն է նշանակուել Հայաստանի արտգործնախարարի խորհրդական Վահէ Աղաբեկեանը:

Նաիրա Մելքումեանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնը զբաղեցնում էր 2003 թուականի հոկտեմբերից, իսկ մինչ այդ պաշտօնավարել է որպէս Լեռնային Ղարաբաղի արտգործնախարար:

95 ՏՈԿՈՍԸ ԴԵՄ Է ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՅԱՆՁՆԵԼՈՒՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «ԼՂՀ բնակչութեան 95 տոկոսը բացարձակ դէմ է ազատագրուած տարածքները յանձնելուն», - Յունիսի 10-ին ԼՂՀ-ում անցկացուած հարցումների արդիւնքում պարզել է «Սոցիոմետր» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի տնօրէն Ահարոն Աղիբեկեանը:

Պարոն Աղիբեկեանը ԼՂՀ էր մեկնել ԼՂՀ նախագահի թեկնածուների հնարաւորութիւնները ճշգրտելու համար եւ միաժամանակ փորձել է նաեւ պարզել ԼՂ հիմնախնդրի կարգաւորման վերաբերեալ ԼՂՀ բնակչութեան տեսակէտները: 700 բնակիչների շրջանում անցկացուած հարցման արդիւնքում պարզուել է, որ դարաբաղցիների 95 տոկոսը խնդրի կարգաւորում է համարում կամ ԼՂՀ-ի անկախութեան հռչակումը կամ ՀՀ-ին միաւորուելը:

Ահարոն Աղիբեկեանի տուեալների համաձայն՝ ԼՂՀ բնակչութեան 8 տոկոսի կարծիքով, ԼՂ-ի կարգավիճակի դիմաց կարելի է տարածքներ վերադարձնել, սակայն յատկապէս ազատագրուած տարածքների որ հատուածը, այսօր Աղիբեկեանը չմտնարամասնեց:

Նա նաեւ չչտակցեց, թէ ովքեր են եղել հարցման մասնակիցները, սակայն նշեց, որ նրանց 1-1,5 տոկոսը ԼՂ հիմնախնդրի կարգաւորման տարբերակ է համարում նաեւ Ատրպէյճանի կազմում ԼՂՀ-ին բարձ ինքնավարութիւն տալը:

ԼՈՒՐԵՐ

ԼՂՀ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԼՂՀ ԼԵԳԻՏԻՄ ՆԱԽԱԳԱՅԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Եթէ ԼՂՀ նախագահի ընտրութիւններն ընթացնան նորմալ մթնոլորտում, պահպանուեն ժողովրդավարութեան ատրիբուտները, ապա միջազգային հանրութեան շրջանակներում կ'ամրապնդուի այն տեսակէտը, որ Ղաբաբաղում ժողովրդավարական գործընթացներ են տեղի ունենում», - Ա1+ին իր տեսակէտը յայտնեց քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանը: Նրա կարծիքով, ԼՂՀ-ի ժողովրդավարական գործընթացները աւելի ցայտուն են ընդգծւում ժողովրդավարութեան հետ կապուած Ատրպէյջանի խնդիրների ֆոնի վրայ:

«Այդ գործօնը մենք միշտ պէտք է օգտագործենք՝ ասելով, որ այն միակողմանի, որը դեռ ճանաչուած չէ միջազգային հանրութեան կողմից, սակայն ժողովրդավարութեան ճանապարհով է ընթանում, ինչպէս կարող է նախկինում ոչ ժողովրդավար կենտրոնի»: Բացի ԼՂ հիմնախնդրի կարգաւորման գործընթացի վրայ ազդեցութիւնից, քաղաքագէտը գտնում է, որ ԼՂՀ ժողովրդավարական ընտրութիւնները կը նպաստեն նաեւ ԼՂ ի քաղաքական եւ տնտեսական զարգացմանը: Ստեփան Գրիգորեանը ընդգծեց, որ ԼՂՀ ընտրութիւնները չի ճանաչում միայն պաշտօնական միջազգային հանրութիւնը. «Պէտք է մոռանալ, որ խօսքը կառավարութիւնների մասին է: Տարբեր երկրների հասարակութիւնների, յայտնի կազմակերպութիւնների համար էական չէ, այդ երկիրը ճանաչուած է, թէ՞ ոչ: Նրանք երկիրը գնահատում են ժողովրդավարութեան գործընթացներով: Մենք միջազգային հասարակութեան վրայ ազդելով՝ կարող ենք ազդել նրանց կառավարութիւնների վրայ»:

Պարոն Գրիգորեանը դժուարացաւ ասել, թէ այսօր ԼՂՀ-ում ընթացող նախընտրական գործընթացները որքանով են համապատասխանում միջազգային չափանիշներին, սակայն ասաց. «Ի պատիւ Արկադի Ղուկասեանի՝ նա երրորդ անգամ շուտապէս պարտուեց: Մէկ դրական քայլ արդէն արուած է, եւ կարծում եմ, որ նախագահի 5 թեկնածուները նոյնպէս կը հետեւեն միջազգային կանոններին: Երկրորդ կարեւոր խնդիրը ԼՂ-ին բանակցութիւնների մասնակից դարձնելն է»:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԿՆՈՋԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Երեքշաբթի, Յուլիս 19-ին վարչապետ Սերժ Սարգսեանը ընդունել է անցած ամիս «փողի լուսցման» մեղադրանքով ձերբակալուած նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանի կնոջը՝ Մելիսա Բրաունին:

«Մի քիչ Ալիկի մասին խօսեցինք», - հանդիպումից յետոյ «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Մելիսա Բրաունը: - «Ես իրեն հարցրեցի, թէ ինչու են Ալիկին ձերբակալել... Մենք գրուցեցինք մի քիչ Ալիկի մասին»:

Անցած շաբաթ Մելիսա Բրաունի, Աժ-ի նախկին խօսնակ Բաբգէն Արարքեանի, նախկին փոխտնօրէն Կարապետ Ռուբինեանի եւ իրանապաշտպան վարդան Յարութիւնեանի ատորակութեամբ նամակ էր յղուել Հայաստանում հաւատարմագրուած դիւանագէտներին եւ միջազգային կառույցների

երկրորդ խնդիրն իրականութիւն դարձնելու համար Ստեփան Գրիգորեանը կարեւորեց այն հանգամանքը, թէ ինչպէս կ'ընտրուի ԼՂՀ նախագահը եւ ոչ թէ՛ ով: Քաղաքագէտը չի վստահում ԼՂՀ նախագահի թեկնածուների հարաւորութիւնների վերաբերեալ սոցիոլոգ Ահարոն Ադիբեկեանի հրատարակած թուերին. «Սոցիոլոգիական հարցումներ անցկացնող մարդիկ պէտք է մաքսիմալ չէզոք լինեն: Ահարոն Ադիբեկեանի դէպքում մենք առնչւում ենք քաղաքականացուած դէմքի: Նա յաճախ սոցիոլոգիան խառնում է քաղաքականութեանը եւ վստահութիւն չի ներշնչում»:

Անկախ ԼՂՀ նախագահի ընտրութիւնների արդիւնքներից, Ստեփան Գրիգորեանը վստահ է, որ Քոչարեան-Ալիկե վերջին հանդիպման ընթացքում վերջնականապէս տապալուեց 3 տարի առաջ սկսուած պրահեան գործընթացը: «Սանկտ-Պետերբուրգի հանդիպման ընթացքում միակ նորութիւնն այն է, որ Ատրպէյջանը վերջնականապէս մերժեց հանրաքուէի առաջարկը: Այդ իմաստով բանակցային գործընթացը ճգնաժամում է: Ես մտավախութիւն ունեմ, որ բանակցութիւնները ոչ միայն երկար ժամանակով կը սառեցուեն, այլեւ Միւսկի խմբի ձեռնադիր կարող է փոխուել»: Քաղաքագէտը չի բացառում, որ Միւսկի խումբը ընդլայնուի կամ խնդրի կարգաւորումը ԵԱՀԿ-ից տեղափոխուի այլ կառույց: «Դա մեզ այնքան էլ ձեռնտու չէ: Մենք խնդիրը միշտ պէտք է բերենք ինքնորոշման դաշտ: Յաւոք, ՀՀ գործող իշխանութիւնը մինչ օրս չեն հասկանում, որ ԼՂՀ հիմնախնդիրը չի կարելի դիտարկել պատմական տեսանկիւնից, որովհետեւ այն վերածուած է տարածքային վէճի: Ինձ թւում է, որ Քոչարեանը կարծես թէ հասկացել է, որ ԼՂ-ն պէտք է վերադարձնել բանակցային գործընթաց եւ չի կարելի անտեսել ինքնորոշման սկզբունքը»: Ինչ վերաբերում է վերջերս ԵԱՀԿ համանախագահների արած յայտարարութիւններին եւ դրանց հերքմանը, ապա քաղաքագէտն ասաց. «Դա նշանակում է, որ նրանց երկրները դեռ չեն կողմնորոշուել ԼՂ հարցում: Աշխարհը դեռ չի որոշել, թէ ինչպէս պէտք է լուծուի ԼՂ հիմնախնդիրը»:

ներկայացուցիչներին՝ հետեւեալ կերպ հիմնաւորելով ձերբակալութեան պատճառները. - «Մի հիմնաւորումը այն է, որ Ալեքսանդր Արզումանեանը անցած տարուայ աշնանը հիմնադրեց «Անհնազանդութեան շարժումը» եւ ակտիւ «փողոցային պայքարի» ջատագովներից էր: Երկրորդ հիմնաւորումն այն է, որ նախորդ իշխանութիւնների օրօք ինքը ունէր Ղաբաբաղի հարցի լուծման խաղաղ տարբերակ, որը չկարողացան անցկացնել Լեւոն Տէր-Պետրոսեանը եւ Ալեքսանդր Արզումանեանը: Եւ այդ տարբերակի հետեւանքով էր, որ նրանք պարտուեցին եւ ստիպուած եղան հրաժարական տալ»:

Մարդու իրաւունքների Եւրոպական դատարանը ընդունել է Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանի գործը:

ԱԼԻԵՒ. «ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐԸ ԴԺՈՒԱՐ ԹԷ ԿԱՄՈՎԻՆ ԱԶԱՏԵՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ատրպէյջանի նախագահ Իլհամ Ալիեւը Յունիս 19-ին Պաքուում տեղի ունեցող ՎՈՒԱՄ կազմակերպութեան գագաթնաժողովում կարծիք է յայտնել, որ «մինչեւ ՎՈՒԱՄ-ի անդամ երկրները չհզօրանան՝ անջատողականները կամովին չեն ազատի գրաւեալ տարածքները»:

ՎՈՒԱՄ-ը, որի երկրորդ գագաթնաժողովն բացուել է Պաքուում, միակողմանի է վրաստանը, Ատրպէյջանը, Ուկրաինան եւ Մոլդովան:

Ալիեւը յայտարարել է, որ ՎՈՒԱՄ-ի պետութիւնների գլխաւոր հիմնախնդիրը անջատողական շարժումներն են երեք երկրներում՝ Ատրպէյջանում, Վրաստանում եւ Մոլդովայում, որոնց տարածքային ամբողջականութիւնը խախտուած է:

«Եթէ մենք չստեղծենք հզօր պետութիւններ, հզօր տնտեսութիւն, հզօր ռազմական ներուժ, հազիւ թէ

անջատողական ուժերը կամովին ազատեն իրենց կողմից գրաւուած տարածքները», - ասել է Ալիեւը:

Այս առումով նա կարեւոր է համարել ՎՈՒԱՄ-ի պետութիւնների ջանքերի համախմբումը՝ կապուած ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում «սառեցուած հակամարտութիւնների» հարցի քննարկման հետ, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Ալիեւը նաեւ համոզմունք է յայտնել, որ Ատրպէյջանը կը դառնայ ՎՈՒԱՄ-ի եւ Եւրոպայի «յուսալի էներգետիկ գործընկեր»:

«Այս տարուանից Ատրպէյջանը դարձել է գազ արտահանող երկիր՝ այսօր Վրաստանի գազի 70-75 տոկոսը մատակարարում է Ատրպէյջանից: Մինչեւ տարեկերը մենք կը սկսենք գազ մատակարարել նաեւ Թուրքիային եւ Յունաստանին», - յայտնել է Ալիեւը:

ՍԱՆԱՅԻՆԻ ՎԱՆՔԵՐԸ՝ ՓԼՈՒԵԼՈՒ ՎՏԱՆԳԻ ԱՌՋԵՒ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: 10-12-րդ դարերից մեզ հասած Սանահինի վանական համալիրը վտանգի տակ է: Պատմական կառույցն օր օրի խարխուլում է: Տանիքներին աճած հարուստ բուսականութիւնը խարխուլում է յատկապէս Սուրբ Աստուածածին ու Ամենափրկիչ եկեղեցիների տանիքները:



Սանահինի վանական համալիրը

Ինչը տարի շարունակ դրանք չեն մաքրուել, արդիւնքում եկեղեցու տանիքներին արդէն հաստաբուն ծառեր կան: Անձրեւներից խոնաւացել են եկեղեցու պատերը, մաքրուել են որմնանկարներն ու ծեփը: Սակայն այդ ծառերը վերացնելու համար մասնագէտներ են պէտք, քանի որ, եթէ առանց տանիքը նորոգելու ծառերն արմատախիլ արուեն, պատերն աւելի արագ կը խարխուլուեն:

Ի դէպ, նախատեսուած է Սանահինի վանական համալիրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանութեան տակ առ-

նել: Այդ մասին անգամ յուշող ցուցանակ կայ համալիրի բակում:

Անցեալ տարի Սանահին էր այցելել նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսը մի բարեարի հետ, սակայն վանքը նորոգելու ուղղութեամբ դեռ որոշակի ծրագրեր չկան: Նկատենք, որ Սանահինի վանական համալիրը ճարտարապետական տեսքով ու գիտական, մշակութային նշանակութեամբ ամէն տարի հազարաւոր զբօսաշրջիկների է բերում աշխարհի տարբեր անկիւններից:

ԸՍՏ ԵՐՈՐԲԱՆԿԻ՝ ԴՐԱՄԻ ԱՐԺԵՒՐՈՒՄԸ ԿՐ ՎՏԱՆԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Վերակառուցման եւ զարգացման եւրոպական բանկը գտնում է, որ «առանց արտադրողականութեան աւելի արագ աճի հայաստանեան տարադրամի արժեւորումը կարող է վստանգել երկրի մրցունակութիւնը»:

Նման եզրակացութիւն է պարունակում Եւրոբանկի զեկոյցում, որը քննարկուել է յաջորդ շաբաթ Եւրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ամառային նստաշրջանում: Բանկը նաեւ անհրաժեշտ է

համարում հանրային կառավարման, թափանցիկութեան եւ մրցակցութեան բարելաւումը, որպէսզի աւելի մատչելի դառնան ֆինանսները եւ ներդրումները:

Եւրոբանկը նաեւ խորհուրդ է տալիս «շարունակական բարելաւում ապահովել գործարարութեան ոլորտում, մասնաւորապէս շուկայ մուտք գործելու եւ հարկահաւաքման բնագաւառում, ինչը կը խթանի դիվերսիֆիկացումը եւ կ'արագացնի աճը»:

ՉԱՍՈՂԱԾ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 1-էն

մէջ որպէս բացասական երեւոյթներ յիշուած են ցած ծնելիութիւնը եւ բարձր մահացութիւնը: Հազար մարդու հաշուով ծնելիութիւնը 1989 թուականի 21,6 տոկոսէն 2002-ին նուազած է մինչեւ 10,2 տոկոս, իսկ մահացութիւնը նոյն ժամանակամիջոցին 6,5 տո-

կոսից հասած է 8,5 տոկոսի: Տնտեսական առումով Հայաստանին բնորոշ է բարձր անհաւասարութիւնը: Վերի խաւը կազմելով ժողովուրդի 10 տոկոսը կը վերահսկէ երկրի հարստութեան 41,3 տոկոսը, մինչդեռ, վարի խաւի մաս կազմող ժողովուրդի 10 տոկոսին բաժին կը հասնի հարստութեան միայն 1,6 տոկոսը:

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

ԳԵՒՐԳԵԱՆ ՇՈՒԿԵՒՈՐ ԾԵՄԱՐԱՆԸ ՈՒՆԵՑԱԻ 31 ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐ

«Մեր ժողովուրդը սպասում է ձեզ, սպասում է սիրով ու անձկութեամբ. արժանի եղէք մեր ժողովրդի սիրուն ձեր ծառայութեամբ ու նուիրումով, ձեր կեանքով՝ գործերով ու պահուածքով»

Պատգամեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը ճեմարանականներին



Յունիսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հանդիսութիւնների սրահում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապետին Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ տեղի ունեցաւ Գէորգեան հոգեւոր ճեմարանի եւ Սեւանի վազգէնեան հոգեւոր դպրանոցի 2006-2007 ուսումնական տարուայ փակման միացեալ հանդիսութիւնը: Այս տարուամբ Գէորգեան ճեմարանն ունեցաւ 31 շրջանաւարտ:

Երկու ճեմարանների միացեալ երգչախմբի կողմից շարականների եւ ազգային երգերի մի քանի կատարումներից յետոյ՝ տեսչական ամէնամեայ զեկոյցով հանդէս եկաւ Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Վազգէն Վրդ. Նանեանը: Հոգեւոր Հայր Սուրբ Սարգիս Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելութիւնը ազգային եւ եկեղեցական կեանքում: Դպրանոցը ներկայիս ունի 71 ուսանող, որոնց թւում սաներ իրաքից, Գերմանիայից, Հունաստանից, Ռուսաստանից եւ Սիրիայից: ճեմարանականների ջանքերով հրատարակուել են հինգ աստուածաբանական աշխատութիւններ: Սաներն իրենց ծառայութիւնն են բերում նաեւ Գեղարքունիքի թեմի եկեղեցիներում: Յաջողութեամբ շարունակում է «Կանաչ աստուածաբանութիւն» բնապահական առարկայի դասաւանդումը դպրանոցում:

Յաւարտ տեսչական զեկոյցների տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն, որի ընթացքում առաջադիմութիւն ցուցաբերած սաները Վեհափառ Հայրապետից ստացան նուէրներ: Ապա ուսանողութեան անունից շնորհակալական խօսք ասաց վեցերորդ լսարանի սան Գոռ Սրկ. Նազարեանը: «ճեմարանական տարիներն այն թիւում են, որով պիտի խմոր-

ուի մեր ողջ կեանքը: ...Այսօր ձեր առջեւ ենք՝ պատրաստ մեր ինքնանուիրումը բերելու Մայր Եկեղեցու գործման, ժողովրդին ծառայելու աստուածահանոյ գործին»,- նշեց Գոռ սարկաւազը: «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողութեանը յաջորդեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեան խօսքը: Նորին Սրբութիւնն իր ուրախութիւնը յայտնեց ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան կողմից Գէորգեան ճեմարանին տրուած բարձրագոյն հաստատութեան հաւատար-

որակը մեր եկեղեցականների, որը նշանակում է միաժամանակ բարձրացնել եւ ծառայութեան որակը մեր Եկեղեցում եւ մեր ժողովրդի կեանքում», ասաց Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը յայտնելով ճեմարանների տեսչութիւններին, մանկավարժներին եւ ճեմարանականներին իրենց նուիրումի, անյոգնաբեկ աշխատանքի ու պատասխանատուութեան բարձր զգացումի համար: Վեհափառ աղօթք բարձրացրեց առ Աստուած, որ Տիրոջ օրհնութեամբ առատանայ հունձքը հո-



մագրերի, ինչպէս նաեւ երկու ճեմարաններում արձանագրուած յաջողութիւնների առնչութեամբ: «Իրապէս, մենք պիտի կարողանանք մեր երազած ուսեալ, մտաւորական նկարագիր եւ խառնուածք ունեցող եկեղեցականներով օժտել մեր Եկեղեցին, բարձրացնել

գեւոր կրթական հաստատութիւնների՝ հունձք կրթական բարձր մակարդակով եւ հոգեւոր պատրաստուածութեամբ, որպէսզի կարելի լինի հոգեւորականաց միջոցով մեր Եկեղեցու ամբողջական ծառայութիւնը ապահովել մեր ժողովրդին:

New Offices For Lease IN PASADENA On Allen Ave. • South of Washington Blvd. Available spaces are between 250sq.ft. TO 460sq.ft. ALL UTILITIES ARE INCLUDED For More Details Call Vartan (626) 255-2537

ABA A.B.A. INSURANCE SERVICES Blue Shield of California Authorized Agent 1975-2005 30th ANNIVERSARY E-mail: BMaronian@AOL.com

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է ԵՐԻԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՅՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՈՒԻԼ ԻՐԱՆԻ ՀԵՏ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Որքան մեկուկ համար գաղտնիք է այն իրողությունը որ Պուշի իշխանությունը ներքնապես միատարր եւ համերաշխ մարմին մը է: Նախագահ Պուշ, ինք, երբեմն կը յարի մէկ կողմի տեսակէտներուն, երբեմն միւս կողմի եւ մանաւանդ ունի իր սեփական տեսակէտները, որոնք յաճախ կը մնան անբացատրելի, եւ կամ յուսկոյն պարագային, կը բխին հոգեբանական եւ զգացական շարժառիթներէ:

Օրինակներ չեն պակսիր: Գիտենք որ Իրաքի պատերազմը ունէր իր ջատագովները, որոնք «neo-conservative» ճանչցուեցան, այսինքն «պահպանողականներ», իշխանութեանն ներս անուններ ունէին - Ռեմգֆելտ, Չէյնի, Ուֆօլից: Այս կարծի խումբին, իբրեւ թէ հակադրուած էր Քոլին Փաուլ գինուորականը, իբրեւ հակառակող մը պատերազմի: Հետաքրքրականը սակայն այն էր որ այս վերջինն ալ ՄԱԿի մէջ, աշխարհին առջեւ իր ելույթին մէջ, փորձեց ցոյց տալ որ Սատտամ Հիւսէյն հիւսիսային գէնքեր ունէր կամ կը պատրաստէր, ցոյց տալով կարգ մը նկարներ որոնք արբանեակներու միջոցաւ առնուած էին: Այսօր, պատերազմը ճիշդ տարին, ամէնուն համար յստակ դարձաւ որ իրաքեան պատերազմի «սխալ» եւ «չինձու» ենթադրութեանց վրայ սկսուած պատերազմ մըն էր, եւ ունէր այլ հետապնդումներ: Առ այժմ, ամերիկեան իշխանութեան մէջ, իրաքեան արկածախնդրութեան գոհերը հանդիսացան պատերազմի նախարար Ռեմգֆելտը, Քոլին Փաուլը, Չէյնիի անմիջական օգնական Սքոթը Լիպի, որ իր մատնիչութեան պատճառաւ, դատարանի կողմէ երկու կէս տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ: Ուֆօլից կոչուածը, իշխանութեանն համաշխարհային «Պանք»ի տնօրէնութեան գնաց, անկէ ալ հրաժարեցուցու համար: Իսկ իր Պուշի «ժողովրդականութիւնը» իջած է 29 առ հարիւրի, բոլոր նախագահներու մէջ ամենէն ցած տոկոսը: Իսկական գոհերը իրաքեան պատերազմի, ամերիկացի գինուորները եւ իրաքի ժողովուրդն են որ ամէն օր, քանի մը հարիւր կը հաշուեն: Ինչ կը վերաբերի իրաքեան պատերազմի ճակատագրին, ընթացիկ տարուայ Սեպտեմբեր ամիսը տեսակ մը ժամկէտ պիտի հանդիսանայ, երբ ամերիկեան ղեկավարը եւ գինուորական ղեկավարը պիտի հաշուեկշիռ մը ներկայացնեն Պուշին, Քոնկրէսին եւ ամերիկեան ժողովուրդին, պատերազմի յետագայ ճակատագիրը որոշելու համար...

Օրինակներ չեն պակսիր: Գիտենք որ Իրաքի պատերազմը ունէր իր ջատագովները, որոնք «neo-conservative» ճանչցուեցան, այսինքն «պահպանողականներ», իշխանութեանն ներս անուններ ունէին - Ռեմգֆելտ, Չէյնի, Ուֆօլից: Այս կարծի խումբին, իբրեւ թէ հակադրուած էր Քոլին Փաուլ գինուորականը, իբրեւ հակառակող մը պատերազմի: Հետաքրքրականը սակայն այն էր որ այս վերջինն ալ ՄԱԿի մէջ, աշխարհին առջեւ իր ելույթին մէջ, փորձեց ցոյց տալ որ Սատտամ Հիւսէյն հիւսիսային գէնքեր ունէր կամ կը պատրաստէր, ցոյց տալով կարգ մը նկարներ որոնք արբանեակներու միջոցաւ առնուած էին: Այսօր, պատերազմը ճիշդ տարին, ամէնուն համար յստակ դարձաւ որ իրաքեան պատերազմի «սխալ» եւ «չինձու» ենթադրութեանց վրայ սկսուած պատերազմ մըն էր, եւ ունէր այլ հետապնդումներ: Առ այժմ, ամերիկեան իշխանութեան մէջ, իրաքեան արկածախնդրութեան գոհերը հանդիսացան պատերազմի նախարար Ռեմգֆելտը, Քոլին Փաուլը, Չէյնիի անմիջական օգնական Սքոթը Լիպի, որ իր մատնիչութեան պատճառաւ, դատարանի կողմէ երկու կէս տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ: Ուֆօլից կոչուածը, իշխանութեանն համաշխարհային «Պանք»ի տնօրէնութեան գնաց, անկէ ալ հրաժարեցուցու համար: Իսկ իր Պուշի «ժողովրդականութիւնը» իջած է 29 առ հարիւրի, բոլոր նախագահներու մէջ ամենէն ցած տոկոսը: Իսկական գոհերը իրաքեան պատերազմի, ամերիկացի գինուորները եւ իրաքի ժողովուրդն են որ ամէն օր, քանի մը հարիւր կը հաշուեն: Ինչ կը վերաբերի իրաքեան պատերազմի ճակատագրին, ընթացիկ տարուայ Սեպտեմբեր ամիսը տեսակ մը ժամկէտ պիտի հանդիսանայ, երբ ամերիկեան ղեկավարը եւ գինուորական ղեկավարը պիտի հաշուեկշիռ մը ներկայացնեն Պուշին, Քոնկրէսին եւ ամերիկեան ժողովուրդին, պատերազմի յետագայ ճակատագիրը որոշելու համար...

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՈՒԻԼ ԻՐԱՆԻ ՀԵՏ
Ներկայիս Պուշի իշխանութիւնը աւելի մտահոգ կը թուի իրաքի մէջ տեմքերասի հաստատելէն աւելի, արգիլելու որ Թեհրան կարենայ իրաքեան շիի իշխանութիւն մը ստեղծել: Այս սակայն առ այժմ անիրագործելի ծրագիր կը թուի, պարզապէս քանի որ իրաքի մէջ նաեւ գոյութիւն ունին սիւննիներ եւ

Քիւրտեր: Սիւննի իրաքցիները իրանեան-պարսկական տիրապետութեան կը վախնային նոյնինքն իրաքի գոյութեանն առաջ: Պէտք է մոռնալ Սատտամ Հիւսէյնի մղած պատերազմը իրանի դէմ, 1980-ական թուականներուն: Սիւննի փոփոխութիւնները շիի իրենց պաշտօնակիցները կը նկատեն Թեհրանի ձեռքին գործիք: Եթէ շիիները իրապէս կ'ուզեն որ սիւննիները վերջ տան իրենց պատամբութեան, պէտք է որոշ հեռաւորութիւն ցոյց տան դրացի մոլլաներէն: Այլապէս, Պաղտատի իշխանութիւնը անկարող պիտի ըլլայ անգղեցութիւն բանեցնել երկրի կարեւոր մէկ մասին վրայ, որ սիւննիներուն ենթակայ կը մնայ:

Անդին, կան քիւրտերը: Հաւանորէն Թեհրան կը վախնայ նաեւ իրաքի մէջ քաղաքացիական պատերազմի մը հաստատուելէն, որուն հետեւանքները կրնան շատ լուրջ ըլլալ: Իրանի մէջ ժողովուրդին 7 առ հարիւրը քիւրտեր են, ինչպէս նաեւ Թուրքիոյ քիւրտերու պարագան: Արդէն ներկայիս որոշ խլրտումներ նշմարելի են Թուրքիոյ քիւրտերու մօտ եւ Թրքական կառավարութիւնը որոշ կանխագրուական քայլեր ցոյց կու տայ: Ինչպէս սիւննիները, քիւրտերն ալ լաւ աչքով չեն դիտուած շիիներու կողմէ: Պէտք է նաեւ մոռնալ որ իրաքեան ազգայնական ոգին միշտ ալ գոյութիւն ունեցած է իրաքի ժողովուրդին մօտ, ինչ համայնքի ալ պատկանի ան...
Կը հասնինք Ամերիկային: Ամերիկեան ներկայութիւնը իրաքի մէջ կրնայ պատճառ դառնալ որ շիի

համայնքի պատկանողներ, ինչպիսիք են Մոքթատա Սատր եւ ուրիշներ, հակին իրանի եւ Ամերիկան նկատեն վտանգ մը իրաքեան ազգայնականութեան: Ամերիկացիներու մեկնումէն ետք, իրանի ազդեցութիւնը շատ հաւանաբար պիտի նուազի, եւ ասկէ կրնայ օգտուիլ իրաք եւ Ամերիկան:
Ինչ կը վերաբերի Ամերիկայի բռնելիք դիրքին իրանի դէմ, իրագեկները կը թելադրեն հետեւեալ ընտրութիւնը կամ աւելի կարծր վարուիլ եւ կամ հանգիստ ձգել իրանը: Իրան կը հանդիսանայ ներկայի ամերիկեան արտաքին քաղաքականութեան ամենէն վտանգաւոր եւ բարդ խնդիրը: Ինչ կը նշանակէ կարծր վարուիլ.
- Աւելի ուժեղ տնտեսական պայքով ենթարկել իրանը, որպէսզի ան չկարողանայ հիւսիսային հետապնդումներու համար հարկ եղած նիւթական միջոցները ձեռք ձգէ: Հարց է թէ որքան ազդու կրնան ըլլալ այս տնտեսական պատժամիջոցները: Մտածողներ կան որ միջազգային մէկուսացումը եւ տնտեսական սեղմումները անպայման կ'ազդեն իրանի վրայ, մանաւանդ ղեկավար շրջանակներուն: Այս հարցին մէջ Եւրոպայի դերը - յատկապէս Ֆրանսա, Գերմանիա եւ Ռուսիա լուրջ դեր ունին:
- Ազդու գինուորական սպառնալիք ընել Թեհրանի իշխանութեան, որպէսզի ան ընդունի դիւանագիտական լեզուն:
- Արագաբար լուծել իրաքեան թնձուկը: Այս եւս ներկայիս անկարելի կը թուի:
Հրաշքի՞ մը պիտի սպասենք...

DON'T MISS your chance to introduce to thousands of Armenians and non-Armenians in a single day!

RESERVE your BOOTH today for the most anticipated event of the year!

THE ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

on Sunday, September 23, 2007 at the Verdugo Park in Glendale

Ձեր արուեստը, ձեռակերտը եւ արհեստը հազարաւոր մարդկանց ներկայացնելու լաւագոյն առիթը ՄԻ ՓԱՍՅՆԷՔ

ԱՊԱՏՈՎԵՑԷՔ ձեր ԿՐՊԱԿՆԵՐԸ այսօր իսկ, տարուան ամենէն շատ ժողովրդականութիւն վայելող ձեռնարկին

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ-ին

Կիրակի, Սեպտեմբեր 23, 2007 Կլէյնտլյի Verdugo Park-ին մէջ

THE BOOTH SIZE IS 10' LONG AT \$300

To reserve your booth, just fill in this form and mail with your payment to:
NSCA, AIDF Committee, 440 W. Colorado Blvd., Suite #201, Glendale, CA 91204

NAME: _____
BUSINESS NAME: _____
ADDRESS: _____
PHONE NO.: _____
EMAIL ADDRESS: _____

For Inquiries or Faster Service, call:
(818) 391-7938 or (818) 395-7967

ԻՐԱՆԻՆ ՊԱՐԱԳԱՆ
Ինչպէս իրաքի հարցին մէջ, իրանի պարագային ալ Պուշի իշխանութիւնը որոշապէս բաժնուած կը թուի ըլլալ: Արտաքին քաղաքականութեան պատասխանատուն, Քոնտոլիզա Ռայս, համաձայն կը թուի ըլլալ դիւանագիտական միջոցաւ իրանի հետ վարուելու, մինչ միւս կողմէ, Տիք Չէյնի, միշտ նոյն Չէյնին, կը պնդէ գործածելու աւելի ազդու միջոցներ, իրանի հետ վարուելու համար: Յստակ է անշուշտ թէ ինչու Տիք Չէյնի միշտ կը նախընտրէ բիրտ միջոցառումներ, քանի որ այդ ձեւով իր ղեկավարած եւ «հակադրութիւն» կոչուած ընկերութիւնը կը ղեկավարէ բազմամիլիոն «պիզնես» իրաքի մէջ, որմէ ինք վստահաբար կ'օգտուի: Պուշի պարագային, ինչպէս իրաքի, նոյնպէս իրանի հարցին մէջ, իր վերաբերմունքը յստակ է, գէթ արտաքինապէս: Քա-

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ ԾԱՆԱԶՈՒԱԾ ԵՐԳԱՅԱՆ, ԴԻՐԻԺՈՐ ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ՅԵՏ

Վարեց՝ ՕՆՆԻԿ ԲԱՅՐԱՄԵԱՆ

Հարց. Նախ՝ բարի գալուստ սիրելի մայեստրո: Երկարատեմ է չենք տեսած ձեզի, ալ չեմ խօսիր այն մասին, որ տասնեակ տարիներ ձեր արուեստը վայելած լուսանկարահանող քաղաք անձկութեամբ կը սպասէ քանի մը տարիէ ի վեր դադարած ձեր ելոյթներուն: Մեծ ուրախութեամբ լսեցիք, իմացանք ձեր հիմնալի ելոյթներու մասին Աւստրալիոյ մէջ, ուր, ձեր փայլուն տաղանդի շնորհիւ հայ

նի հեղինակային համերգը ղեկավարելուց յետոյ:

Յետագայ գործողութիւնները ծաւալեցին Երեւանում, նոյն տարուայ ամրանը, «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնի օրերին, երբ հայրենիքում ելոյթներ ունենալու համար Երեւան էր եկել Սիտնիի Համազգայինի Սեւան մասնաճիւղի նոյնանուն պարախումբը: Շատերս ենք յիշում այդ պարախումբի անդամների անցկացրած պժգալի օրերը պէջրութեան ճգնաժամի օրե-



մշակոյթի եւ երաժշտութեան երկրաչարժ մը տեղի ունեցաւ:

Ո՞ր կազմակերպութիւնը ձեզ հրաւիրած էր, եւ ի՞նչ առիթով:

Պատ. Մինչ հիմնական պատասխանին անցնելը անհրաժեշտ եմ համարում փոքր-ինչ պատմական անդրադարձ անել:

Նախ ասեմ, որ վերջին 5-6 տարուայ իմ բացակայութիւնը մեր համայնքից եւ իմ արուեստը զնահատող երաժշտասէրներից արդարացում է այն պատճառաբանութեամբ, որ անընդհատ համերգային շրջագայութիւնների մէջ եմ՝ Գանատայից մինչեւ Աւստրալիա շրջագծով:

Աւստրալահայ համայնքը ինձ համար նոր «յայտնաբերուած» գաղութ է: Ես Սիտնիում առաջին անգամ համերգ եմ տուել դեռեւս 1987 թուականին՝ Համազգային Մշակութային Միութեան Շանթ մասնաճիւղի հրաւերով: Կրկին Սիտնիում ելոյթ ունենալու մտադրացումը տեղի համազգայինների մօտ վերազարթնեց անցեալ տարուայ զարնանը, իմ՝ Արա Գէորգեա-

րին, երբ պարախումբը չէր կարողանում մեկնել Աւստրալիա:

Ըստ մեր պայմանաւորուածութեան, ես պէտք է չաչտաչիր պատրաստէի երգի-պարի համոյթի համար: Խմբի մեկնելուց յետոյ, ես երեք պար յօրինեցի, եւ որոշ ժամանակ յետոյ ուղարկեցի ձայնագրութիւնները Սիտնի՝ փորձերի համար:

Յետագայում, պարագաների բերմամբ նախաձեռնութիւնն անցաւ Համազգայինի «Նաիրի» մասնաճիւղի ձեռքը:

Քսան տարի առաջ գործող Կոմիտաս երգչախումբի նախկին անդամ-անդամուհիները, որոնք այսօր արդէն վաստակաշատ ծնողներ են, որոշել էին Համազգայինի միջոցով եւ իմ ղեկավարութեամբ ստեղծել մի նոր երգչախումբ եւ Սրբազան Համերգի տեսքով ներկայանալ հանրութեանը՝ արժանավայել ձեւով նշելու Մեծ Եղեռնի 92-ամեակը:

Հ. Ըսել է, նախապէս ծրագրուած երգի-պարի համոյթ հիմնելու գաղափարը փոխուեցա՞ւ:

Պ. Այո: Այս անգամ արդէն նախաձեռնութիւնն իր ձեռքն էր վերցրել Համազգայինի «Նաիրի» մասնաճիւղը: Հենց այդ մասնաճիւղի հրաւերով էլ յայտնուեցի Աւստրալիայում:

Հ. Կարծեմ թէ դժուար չէ ենթադրել, որ այս ամէն փոփոխութիւնները, պարտաւորուած եղած էք վերանայիլ սպասուելիք համերգին յայտագիրը: Այդպէս է, թէ ոչ...

Պ. Այո՛, այդպէս է: Եւ խնդիրը միայն այդ չէր: Ես, որ կարծում էի, թէ առջեւս մշտապէս գործող, կայուն երգչախումբ պիտի ունենամ, բնաւ էլ այդպէս չէր: Ժիշդ է, առաջին իսկ փորձին 70 անդամ-անդամուհիներ էին հաւաքուել, բայց միայն ծծ երգչուհիներ էին նոթաճանաչ, իսկ մնացեալը՝ հիմնականում ամբողջովին անտեղեակ էին երգչական, երգչախումբային արուեստից:

Ուրեմն, ամէն ինչ պէտք էր սկսել զհրոյից:

Հ. Աստուած ի՛մ... Ի՞նչպէս կրցաք այդքան կարճ ժամանակի մէջ անօրինակ յաջողութիւն արձանագրել, այբեզգիմէն սկսելով խումբ ստեղծեցիք, յայտագիր պատրաստեցիք, եւ մանաւանդ, որակաւոր ելոյթ ապահովեցիք երգչախումբին համար բոլորովին անծանօթ սիմֆո-

շրջանում շատ յուսահատական պահեր եմ ունեցել, քանի՛ քանի՛ անգամ լցուել է իմ համբերութեան բաժակը, բայց տեսնելով երգչախումբի անդամների վախուռած, սպասողական հայեացքները, ոչ թէ դատարկել եմ բաժակի պարունակութիւնը, կոտրելով նաեւ բաժակը, այլ ձեռքս եմ վերցրել մի նոր, է՛լ աւելի մեծ բաժակ...:

Իսկ ինչո՞վ է վարձահատուց եղել երգչախումբը իմ՝ այդքան գոհողութեան դիմաց, աներկբայ ընդունել է իմ պահանջը, այն է, փորձեր անել շաբաթը Հինգ օր..., եւ պատկերացնո՞ւմ էք, ոչ մի խօսք, ոչ մի առարկութիւն, համընդհանուր լուռութիւն սրահում...

Ես, երբեւէ, ոչ մի տեղ, ոչ մի խմբի հետ նման կարգի փորձութիւն չեմ ունեցել:

Հ. Ի՞նչ կ'ըսէք մայեստրո, անհաւատալի է, ինչ է, այդ մարդիկ գործ-բան չունի՞ն, ի՞նչպէս կրցած են շաբաթը հինգ օր փորձերու գալ...

Պ. Այո, սիրելի Օննիկ, «այդ մարդիկ» ինչպէս կ'ըսես դուն, գործ-բան, ընտանիք, երեխաներ ալ ունէին, եւ այդ ամէն ժամանակաւորապէս մէկ կողմ թողած, յանուն հայ արուեստի եւ մասնաւորապէս իմ ստեղծագործութիւնների հանդէպ տածած անկեղծ սիրոյ,



Նիկ Նուագախումբին հետ:

Պ. Ժողովրդական առածն ասում է. «մէկ ծաղիկով զարուն չի գալ...». ուզում եմ ասել, որ, եթէ չլինէր երգչախումբի անդամների աներեւակայելի, անպատմելի նուիրուածութիւնը, գումարած՝ իմ կարողութիւններն ու ներողութիւնը, հիւանդագին աշխատասիրութիւնը՝ հազիւ թէ հնարաւոր լինէր նման ցնցիչ յաջողութեան հասնել: Պէտք չունեմ թաքցնելու, սկզբնական

յաղթելու գորաւոր կամքով զինուած, անկարելին կարելիի վերածեցին, եւ ի զին ամէն գոհողութեան, միանգամայն բաւարար մակարակ ապահովեցին Մեծ Եղեռնի գոհերի յիշատակին նուիրուած համերգի ընթացքին:

Հ. Պրն. Անասեան, իսկապէս գարնանալ կարելի է Սիտնիի այդ երգչախումբի անդամներուն նուիր-

Շաբ-ը էջ 17

Advertisement for Atlantis Restaurant and Night Club. Features a woman in a pink belly dancing costume, a hookah, and text: ATLANTIS RESTAURANT AND NIGHT CLUB. FRIDAY NIGHTS AT ATLANTIS ARABIAN NIGHTS. ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. 626.449.4599. 162 N. SIERRA MADRE BLVD. PASADENA, CA 91107.

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

**«ԽՕՍԵՆՔ ԶԱՅԵՐԵՆ, ԼՍԵՆՔ ԶԱՅԵՐԵՆ»
ԽՈՐԱԳՐՈՎ ԶԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ
ԵՐԵՎՈՆ ԼԱՐՔՈՒՄ**

ԹԱԳՈՒՀԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Աւանդույթ է դարձել տարին մէկ անգամ կազմակերպել հայ երաժշտութեան երեկոյ Լարք երաժշտանոցում ուսանողների մասնակցութեամբ:

Կազմակերպել ենք երեկոներ նուիրուած Մեծն Կոմիտասին, Արամ Խաչատրեանին եւ հայ երաժշտութեան համաստեղութեան միւս մեծութիւններին:

«Խօսենք հայերէն, լսենք հայերէն» խորագրով այս համերգը կազմակերպւած էր Լարք երաժշտանոցի նորակառուց շէնքի գեղեցկատես սրահում: Համերգին մասնակցում էին անհատական դասարանների ուսանողները դաշնամուրի, ջութակի, թաւջութակի, ձայնամարզութեան դասարաններից դասախօսութեամբ Սուսաննա Աթապետցի, Հովհաննէ Յովսէփեանի, Նունէ Գարթաթեանի, Կարինէ Տէր Գէորգեանի, Վիկտորիա Սիմոնեանի (դաշնամուրի բաժնի դասախօսներ), Էմմա Մելքոնեանի, Լադո Սէյրանեանի (ջութակի բաժնի դասախօսներ) Մարլէն Սարգսեանի (թաւջութակ) Կարինէ Աւագեանի (ձայնամարզութիւն): Համերգին մասնակցում էն նաեւ «Ծիածան» մանկապատանեկան երգչախմբի բ. եւ գ. ենթախմբերը (գեղարուեստական ղեկավար Գոհար Բոյաճեան), «Տաւիղ» աղջիկների պարային համույթը (գեղարուեստական ղեկավար Սոնա Աւետիսեան) եւ 25 ուսանողներից կազմուած ասմունքի խումբը (գեղարուեստական ղեկավար Թագուհի Արզումանեան), որոնք իրենց իսկ շրթներով արտայայտեցին մեր ոսկերչիկ հայոց լեզուն հայ եւ օտար բանաստեղծների խօսքեր եւ բանաստեղծութիւններ:

Հանդիսանալով նաեւ օրուայ հանդիսավարը, ես իմ բացման խօսքով արտայայտուեցի հետեւեալը.

Մարտնահուած էջ 14-էն

ուռթեան: Ռամկալարները՝ աջ, դաշ- նակցականները՝ ձախ: Լուրջ, հան- դիսաւոր, քիչ մը դժգոհ՝ նստած են ու կը նային իրենց առջեւ: Ձախէն աջ, կամ աջէն ձախ՝ ոչ մէկ ժպիտ, նայուածք կամ խօսք: Իրարու չեն բարեւեր, չեն խօսիր, կը նային, ուղիղ, դիմացի պարապութեան:

Բա՛յց... եկած են: «Համաստեղը, որ ներկայ է, կու գայ փափախու. «Քօտաք մը ըլլար, ասոնց պատկերը քաշէինք: Քսանհինգ տարիէ ի վեր չտեսնուած պատկեր մը...»: Իր ուրախութեան չափ չկայ: Հարկ է ուրեմն, ի չգոյէ պատկերահան մեքենային, գոնէ պատ- կե-րագարդել իր գոհունակութիւնը:

«- Գոլումպոսի հակիթն է, Համաստեղ, հակիթը, եւ ուրիշ ոչինչ: Ճիշդ է որ Գոլումպոս հակիթ- թը անկեց ծայրէն քիչ մը կոտորելով, բայց, տնկե՛ց: Եթէ է սա աջ-ձախ նստած քանի մը գլուխներն ալ իրարու զարնէինք, ոչ կոտորելու չափ, սանկ... կակուղցնելու աստի- ճան, հաւատա՛ որ մեր ազգային հակիթն ալ պառկած է ի մնար...»

«Ինչո՞ւ, ամբողջ քառասուն տա- րիներ սրբապղծութեան պէս բան մը համարուէր որ ա՛յս կուսակցութեան պատկանող անձ մը ա՛յն կուսակցու- թեան սրահը մտնէ. ինչո՞ւ չեղաւ այնպէս, ինչպէս կրնար ըլլալ եւ կը տեսնենք թէ կրնա՛յ եղեր ըլլալ»:

«Նաւասարդեաններն ու Դրօ- ները - եւ անոնց հակադիր միւս ճակատին գլուխները, որոնք առա- ջիններուն հռչակը չունեցան բայց նուազ կարծր գլուխներ չէին — այո, այդ ղեկավար կոչուածները ժխտա- կան դեր մը կատարեցին անշուշտ, բայց ճիշդ պիտի չըլլայ ամբողջ պատասխանատուութիւնը անոնց վրայ փաթթել: Այդ մարդիկը մէջ մէկ առիւծ են, երբ զանգուածը մեղկ ու կակուղ տեսնեն: Իրենք կը կա- կուղնան, կը ոչխարանան ու կը հետեւին (ամա՛ն, չըլլա՛յ որ մէկը իրենց հարմարութիւն խելքին հետ խաղայ...) անմիջապէս որ նկատեն թէ զանգուածը առանց իրենց ալ կրնայ քալել: Բայց դարձեալ, միշտ նոյն հարցումը: Ինչո՞ւ:»

«Պարզապէս թորգոմներու պա- կասէն»:

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՋՈՐԴՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Դասախօսական ձեռնարկի հան- դիսավարը ես էի: Բացման խօսքիս մէջ յիշեցի որ Անդրանիկ Ծառուկե- ան ամէն բանէ առաջ եւ վեր՝ տաղանդաւոր հայ բանաստեղծ մըն է եւ մենք հաւաքուած ենք հոն, մեծարելու հայ մեծ բանաստեղծ Անդրանիկ Ծառուկեանը:

Տեղի ունեցաւ մեներգ եւ ար- տասանուեցան իր քերթուածներէն «Ուխտ Արարատին»ը եւ «Հէյ ջան Երեւան»ը:

Գլխաւոր խօսողն էր «Հայրե- նիք» օրաթերթի խմբագիր՝ Գուր- գէն Միխիթարեանը:

Փակման խօսքը ըրաւ Անդրա- նիկ Ծառուկեան: Ան յատկապէս համերաշխութիւն եւ միասնութիւն պատգամեց:

Մեր բոլոր գաղութներու մէջ տարակարծութիւններ եւ կուսակ- ցական հակառակութիւններ գոյու- թիւն ունին, ըսաւ ան: Բայց այդ տարակարծութիւններն ու կուսակ- ցական հակամարտութիւնները պէտք չէ արգելք ըլլան մեր ժողովուրդի միասնականութեան, շեշտեց ան:

Ան նաեւ ցաւ յայտնեց Հայ Եկեղեցւոյ բաժանեալ վիճակին հա- մար: «Հայաստանեայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգին է», ըսաւ ան ցաւով աւելցնելով նաեւ հետեւեա- լը. «Դուք հայոց հոգին կիսած էք»:

Խօսուեցաւ Անդրանիկ Ծառուկե- անի խմբագրած «Նայիրի» շաբա- թաթերթի մասին: Շուրջ 150 ան- հատներ բաժանորդագրուեցան «Նա- յիրի» շաբաթաթերթին:

Մեծ ծափահարութիւններով գնահատուեցաւ ձեռնարկը: Ազօթ- քով եւ պահպանիչով փակուեցաւ երեկոյթը:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ԲԱՅՑ ԿԱՐԵՒՈՐ ԱՆԱԿՆԿԱԼ ՄԸ

Անդրանիկ Ծառուկեանի դա- սախօսական երեկոյթէն ետք, յա- ջորող օրերուն՝ շատ մը հայ ան- հատներու կողմէ հեռաձայններ ստա- ցանք: Կային շատեր որոնք կ'ուզէին հանդիպիլ իրեն: Շատեր ալ կը փափաքէին ճաշի հրաւիրել զինք:

Հրաւերները բազմաթիւ էին: Յատկանշական էր հայ կնոջ մը ջերմ փափաքը գալու մեր մօտ՝ կարեւոր անակնկալով մը: Հրաւի- րեցինք զինք:

Բնիկ կիւրիցի հայ տիկին մըն էր ան, որ իր հետ բերած էր երգապնակ մը ձայնագիր մեքենայով:

Պատմեց ան, որ Անդրանիկ Ծառուկեանի հայրը՝ Թորոս Ծա- ռուկեան՝ Հնչակեան հերոս մըն էր եւ ճանչցուած էր որպէս՝ «Թորոս Ծա-»

ռուկեան Չէլօ»: Ան կիւրիցի շրջա- կայ լեռներուն վրայ տարիներ շա- րունակ կուռած էր թուրք ջարդա- րարներու դէմ եւ եղած էր միշտ յաղթական: Կիւրիցիներու ամենէն շատ սիրուած հերոսն էր ան: Երգ հիւսած էին անոր վրայ եւ ձայնապ- նակներ պատրաստած: Անոնք այդ ձայնապնակներու վրայէն միշտ մտիկ կ'ընէին այդ երգը:

Պատուական այդ տիկինը՝ յե- տոյ իր հետ բերած այդ երգապնակը դրաւ ձայնագիր մեքենային վրայ եւ մենք եւս մտիկ ըրինք զայն: Երգի աւարտին յիշուեցաւ «Չէլօ Թորոս Ծառուկեան» անունը:

Երգը ուշի-ուշով, մեծ յոգովով կրկին անգամ մտիկ ըրաւ Անդրանիկ Ծառուկեան եւ ես տեսայ թէ ինչպէս այդ հերոս հօր՝ բանաստեղծ գաւկիին սիրատոջոր աչքերէն արցունքներ սկսան սահիլ՝ իր այտերն ի վար:

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ ԻՐ ՀՕՐ ՄԱՍԻՆ

Մանկութիւն չունեցող մար- դիկ» գրքին մէջ, Անդրանիկ Ծա- ռուկեան ունի շատ սրտառուչ էջ մը՝ իր հօր մասին: Շուրջ երկու էջերու մէջ ներկայացուած այդ հատուածը՝ գրական արուեստի գլուխգործոց մըն է, գոհար մը պարզապէս: Մարդ- կային իրաւ զգայնութիւններու պատ- կերաւոր հանդէս մըն է այն՝ տրամօ- րէն գեղեցիկ, գրուած ոսկեղնիկ բառերով եւ ոճով:

Ահա այդ էջը. ***

«Յատակօրէն կը յիշեմ օրը եւ

պահը: Որբանոցի համազ-գեստը նետուած էր: Առաջին օրն էր նոր հագուստիս: Բակն էի, բայց գաղջ եռանդով մըն էր որ կը մասնակցէի խաղերուն, խնայելով հագուստիս եւ անոր քաղցրօրէն գապիչ տպաւորու- թեան տակ, զգուշանալով լայն շար- ժումներէ: Անդամներուս ազատու- թիւնը կապտուած էր: Հաշուով կը վազէի, ճիգ պահանջող եւ վտանգա- ւոր ոստումներէ կը խուսափէի:

«Տեսես աղբարը եկաւ զիս կանչեց, յայտնելով թէ դուրսէն կ'ու- գեն: Հեռուէն տեսայ մայրիկս ու զարմացայ: Դեռ կէս ժամ առաջ տունն էի, ճաշի ատեն, ու սովորակա- նին պէս բաժնուած էի իրմէ: Անակն- կալ եւ դէշ բանի մը նախազգացու- մով, կ'առաջանայի դէպի դուռը, նոյն ատեն մտածելով, թէ հաւանօրէն նոր հագուստիս շուրջ կը դառնայ խնդիրը, եւ մայրիկս եկած է ըսելու, որ աւելի լաւ կ'ըլլայ, եթէ այսօր հանեմ եւ Կիրակի օրը հագնիմ:

«Անձանօթ մարդ մը կար մայ- րիկիս հետ, մօրուքաւոր, փոշոտ, ալյանդակ հագուստներով: Մայ- րիկս բան մը չըսաւ, բայց մարդը, զիս տեսնելուն պէս, գրկեց, սեղմեց կուրծքին եւ սկսաւ համբուրել:

«-Թորոսին աչքերն է, վա՛յ ես վրո՞ւմ վա՛յ, Թորոսին քիթն է, Թորոսին մազերը, վա՛յ կիտի ես վ- րում, վա՛յ...»

«Ծխախոտի կծու հոտ մը կու գար հագուստներէն: Դէմքին խոզա- նակի պէս կարծր մազերը եւ պէխե-

Մար.ը էջ 19

SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL 2501 N. Maiden Lane, Altadena, CA 91001 OPEN REGISTRATION FOR 2007-2008 SCHOOL YEAR FROM NURSERY TO 12TH GRADE

ԵԿԵՂԵՑԻ

ԻՍ ՅՈՒՇԵՐԻՑ

ԱԻՑՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

1927 թուին ես արդէն եօթը տարեկան մանուկ էի: Յիշում եմ իմ ծննդավայր Քալաա գիւղը, իր հողաչէն եւ մասամբ աղիւսաչէն տներով, կլոր եւ գմբէթաձեւ կտուրներով: Այն օրերին գիւղում ապրում էին 250 հայ ընտանիքներ, հանգիստ խաղաղ եւ համերաշխ: Մեր գիւղը 300 տարուայ պատմութիւն ունի: Դա են հաստատում գերեզմանատան շիրմաքարերի վրայ գրուած տարեթուերը: Մեր գիւղը շրջապատուած է խաղողի եւ զանազան պտուղների այգիներով, կանաչազարդ լեռներով եւ սարերով: Խմբով բարձրանում էինք Ռասպանդ անունը կրող լեռը, որ բնական հիանալի տեսարան ունէր: Կիրակի օրերը սղանքը եւ աղջիկները զբօսնում էին սարերի փէշերին: Ոչխարների հօտը արածում էր դաշտերում: Սարերը բաժանուած էր գիւղերի բնակչութեան միջեւ, որոնք հետեւեալներն էին՝ Իմալիւն, Մինասեան, Աղաքեան, Մատթէոսեան, Հախնազարեան եւ Ասլանեան: Ապահով էր սարերի փէշը: Շատերը գիշերում էին այնտեղ: Ձմեռուայ ձիւները հալչում էին ու սարերից հոսում էին ներքեւ, որից օգտուում էր ժողովուրդը:

Գիւղատէրը շատ հոգատար վերաբերմունք ունէր մասնաւորաբար հայ գիւղացիների նկատմամբ: Սակայն ներգաղթի եւ որոշ երիտասարդների կողմից ցուցաբերած ոչ ցանկալի ընթացքի պատճառով, այդ ընթացքը փոխուեց եւ շատերը իրենց անհեռատես քայլերի պատճառով պատճառ դարձան որ վնասի հայութեան վարկը մեր եւ շրջանի միւս քաղաքներում: Այդ իսկ պատճառնե-

րով գիւղերը սկսուեցին դատարկուել հայութիւնից, եւ տները մնում էին ֆարսերին: Գիւղերում մնացել էին տարեցները եւ անհափազաս երեխաները, որոնք ուրախ ու անհող խաղում ու վազվզում էին փողոցներում եւ բնակարանների կտուրներում: Ամէն օր հնչում էին Ս. Յակոբ եկեղեցու զանգերը, որոնց ձայնը տարածուած էր ամենուր եւ հասնում ամենահեռուոր վայրերը մինչեւ 20 մղոն:

Առաւօտեան զանգերի դողանջներով զարթնում էր գիւղի բնակչութիւնը: Պարսիկ գուղացիներն անգամ հաճոյքով էին լսում զանգերի ձայնը, որն առաւօտ, երեկոյ, օրուայ ժամերն էր լիչեցնում բոլորին: 1992 թուին երբ ինձ բախտ վիճակուեց այցելել Հայաստան, առիթ ունեցայ հանդիպել այնտեղ լոյս տեսնող «Նաւասարդ» թերթի խմբագրութեան եւ որոնք ինձ հետ տեսակցութիւն կազմակերպեցին: Այդ ընթացքում ես ցանկութիւն յայտնեցի որ եթէ հնարաւորութիւններ ստեղծուեն, կարող եմ Քալաա գիւղի Ս. Յակոբ եկեղեցու զանգերը փոխադրել Հայաստան եւ յանձնել Ս. Էջմիածին: Սակայն այդ գործում ես յաջողութիւն չունեցայ: Մտածեցի թէ եւ հայաթափուած է մեր գիւղը, բայց եւ այնպէս յարմար է որ առայժմ զանգերը մնան իրենց տեղում: Բնականաբար չիշում էի անցեալի քաղցր եւ անմոռաց օրերը: Յիշում եմ տօնական եւ պահքի օրերը երբ հաւաքուած էինք մեր եկեղեցու շրջափակում: Եկեղեցու հովիւ Տ. Արսէն քահանայն տօնական օրերին ինքն էր հնչեցնում զանգերը եւ ժողովրդին աւետում Յիսուս Քրիստոսի ծնունդը եւ կամ Ս. Յարութիւնը: Երանելի եւ անմոռաց օրեր...

ՅԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ ԸԻՆԳ ԸԱԶԱՐ ՏՈՒՆԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԷ ԵՐԵՒԱՆԻ «ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ»

«Կլէնտէյլ Մէմորեալ Հիւանդանոց»ի մէջ սրտի վիրաբուժական յաջող գործողութենէ մը ետք տուն վերադառնալուն ուրախ առիթով, Տիար Յակոբ Փափազեան հինգ հազար տոլար կը նուիրէ Երեւանի «ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ» նորոգութիւններու ֆոնտին, բարձր գնահատելով բազմավաստակ ուսուցչապետ, տնօրէն եւ դաստիարակ Բենիամին Ժամկոչեանի անունը կրող համանուն դպրոցի կրթանուէր գործունէութիւնը:

«ԽՕՍԵՆՔ ԶԱՅԵՐԷՆ, ԼՍԵՆՔ ԶԱՅԵՐԷՆ»

Շարունակուած էջ 8-էն

կոյթի բոլոր երանգներից ու ելեւէջներից նպաստ բերել նրանց հայեցի կերտմանը:

Այո՛, ազգը մեծ է իր մեծերով եւ մեծ է ոչ միայն այդ մեծերի գոյութեամբ, այլ նախ եւ առաջ նրանով, թէ ազգը ինչպէս է վերաբերուած իր մեծերին:

Մեծերը գալիս են եւ գնում...

Կարելոր է, թէ ինչպէս ես կարողանում առաւել լրիւ օգտուել մեծերի գոյութիւնից, առաւել լրիւ ժառանգել նրանց իմաստութեան պտուղները, սովորել նրանց դասերը:

Եւ ինչպէս ես արտայայտուեցի որպէս համերգի հանդիսավար իմ եզրափակման խօսքում, ազգը պահող լեզուն է:

Ջիւանին ասում է. «Ազգ պահող երեք բան կայ՝ կրօն, լեզու, հայրենիք»: Իսկ Աւետիք Իսահակեանը ասում է «Առանց լեզուի ազգը չկայ, սիրեցէք հայոց լեզուն եւ հայ ժողովուրդը չի կորչի»:

Սիրելի հայորդի գաւակներ, ճակատագրի բերումով ապրում ենք հայրենի հողից հեռու եւ ցաւօք սրտի մեր ոտքերի տակ բացակայում է մեզ առիւծի ուժ տուող հողը:

Ձեր ուսերին է դրուած որպէս հայ յարատեւելու խնդիրը: Իսկ որպէս հայ յարատեւելու միակ միջոցը տէր կանգնելն է մեր մշակոյթին եւ ոսկեղնիկ հայոց լեզուին: Խօսենք հայերէն եւ լսենք հայերէն... Հպարտ լինենք, որ գաւակն ենք այն թագադիր լեռան տիրոջ, որը մեր Հայաստանն է եւ որի լեզուն հայերէնն է, մեր ոսկեղնիկ լեզուն, այն լեզուն, որի համար Պարոյր Սեւակն ասում է.

Քեզ՝ մեր հայկական եւ արամական,

Չկարողացան քեզ խլել մեզնից, Ո՛չ, խարդաւանքով արամէական,

Ո՛չ բիւզանդական սիրով անազնիւ,

Ո՛չ Ահրիմանի անեղ նետերով, Ո՛չ Մահամեդի ճմլիչ ոտերով, Ո՛չ ճշմարտութեամբ,

Ո՛չ էլ ստերով: Այո, յուզիչ երեկոյ էր, յուզուած էին եւ մեծերը եւ փոքրերը:

Երեկոն աւարտուեց Սիլվա Կապուտիկեանի յայտնի պատգամով՝

Լսիր որդիս, ուր էլ լինես, Այս լուսնի տակ ուր էլ գնաս Թէ մօրդ անգամ մտքիցդ հանես,

Քո մայր լեզուն չմոռանաս:



Wahib

Wahib's

MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA. TEL 626-281-1006 626-587-1048 FAX 626-281-3641

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԵՐԳԱՅԱՆ, ԴԻՐԻԺՈՐ ԴԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակում է 7-էն

ուստի Ես ալ բնաւ չեմ իմացած նման խուճիկի մը առկայութիւնը սփիւռքի ողջ տարածքին:

Պ. Պիտի ընդհատեմ քեզ, սիրելիդ իմ Օննիկ: Այդ նուիրուածութեան հիմնական պատճառը կարօտն է, կարօտը անձիս հանդէպ: Անհամեստաբար պիտի ասեմ, որ ինձնից յետոյ, քսան տարուայ ընթացքում նման որակաւոր համերգ չի տեսել Սիտնիի հայ երաժշտասէրը: Ժամանակ առ ժամանակ, փոքր-մոքր ելոյթներով, անդամների քիչ քանակով, տարբեր խմբավարներ ինչ-որ բան արել են, սակայն երգչախմբի անդամները տարիներ շարունակ փայփայել են յոյսն այն օրուայ, որ կրկին կ'աշխատեն ինձ հետ:

Ինչպէս վերը նշեցի, դեռ Սիտնիի չհասած, ինձ տեղեկացրին, որ 70 անդամներ պատրաստ են երգել իմ մականի տակ, այնպէս, որ, համերգի յաջողութեան մէջ զերազնահատելի է երգչախմբի դերը:

Հ. Ինչպէս լսեցի՞նք, ձեր մեծ յաջողութեանը ետք, տարբեր կազմակերպութիւններ շահագրգռուած են ձեր ղեկավարութեամբ համերգներ կազմակերպել: Կրնայի՞ք հակիրճ ձեռնարկ գաղափար տալ մեզ այդ հրաւերներու մասին:

Պ. Ապրիլ 14ի համերգին, օտարազգի ունկնդիրները մէջ է եղել Շառլ Ազնաւուրի երգերի միակ կատարող, ազգութեամբ ֆրանսացի երգիչ Միլիօ Ֆուկո-Լարշէն: Վերջինս, հմայուած իմ նուագախմբային մշակումներով, ինձ առաջարկութիւն է արել բողոքական նորովի մշակել եւ գործիքաւորել Ազնաւուրի աւելի քան 30 երգ, ամբողջական մի յայտագիր: Այդ երգիչը նպատակ ունի իր պատկանած ինչ որ կաթողիկէ ընկերութեան հովանաւորութեամբ մէկ տարի շարունակ աշխարհի տարբեր քաղաքներում կատարել իմ մշակած Ազնաւուրի երգերը եւ այն էլ իմ ղեկավարութեամբ: Ազնաւուրի այդ երգերի ողջ նութեանը նախապէս մեզ հետ խորհարարեալ իմ համերգային ուղեւորութիւնն սկսելու է Սիտնիից եւ նպատակ ունի հանրութեանը ներկայանալ Սիտնիի նշանաւոր օփերային թատրոնում՝ Նոյեմբեր ամսուայ կէսերին:

Հ. Ըստ իս, բաւական պատասխանատու եւ դժուար յանձնառութիւն առած էք ձեր ուսերուն, սիրելի մայրս, այդպէս չէ՞, մանաւանդ, եթէ նկատի ունենանք, որ Ազնաւուրին երաժշտութիւնը շատ կը տարբերի ձերին:

Պ. Ճիշդ է Օննիկ ջան, բայց երաժշտութիւնը՝ երաժշտութիւն է, ժանրերն են տարբեր: Հետաքրքիր է, որ այդ երգչին դուր են եկել յատկապէս իմ երգեր-խմբերգերի նախանուագները եւ ընդգծուած հայկականութիւնն ու գործիքաւորման հնարքները՝ իմ վերջերս յորինած սիմֆոնիկ պարերում, որոնցից երկուսը («Ղանձարի բակում», «Սայաթ Նովայի կանչով») պարային բեմադրութեամբ ներկայացրեց Համագրային Sydney Dance Company պարախումբը: Իսկ իմ «Յաղթանակ» պարը, որ չհասցրեց բեմադրել այդ պարախումբը, բեմադրելու էր Հայաս-

տանի պարի պետական պարախումբը՝ տաղանդաւոր պարուստյց Գագիկ Կարապետեանի բեմադրութեամբ, բայց ցաւով պիտի ասեմ, որ նա վերջերս թողել է իր պաշտօնը եւ դեռեւս տեղեկ չեմ մանրամասնութիւններին:

Հ. Ուրիշ ի՞նչ միջոցներով հանդէս եկաք Սիտնիի մէջ, բանախօսութիւն, յօդուածներ, այլ կարգի ելոյթներ, եւ այլն:

Պ. Հիմնաւոր բանախօսութեամբ ելոյթ ունեցայ Համագրայինի Նայիրի Միութեան նորաստեղծ գրական-մշակութային մասնաճիւղի կազմակերպած՝ Սիլվա Կապուտիկեանին նուիրուած յուշերեկոյին:

Իմ ղեկավարութեամբ երգչախումբը փառահեղ ելոյթ ունեցաւ Մեծ Եղեռնին նուիրուած համագործակցին ձեռնարկին (դաշնակահար՝ Վարդուհի Լեփեճեան): Առանց իմ գիտութեան, երգչախումբը ելոյթ ունեցաւ նաեւ իմ յոբելեանական երեկոյին՝ խմբավարներ Մարիթա Անասեանի եւ Աիդա Աւետիսեանի ղեկավարութեամբ: Իրենց փայլուն կատարումներով միջոցառումն աշխուժացրին հիանալի մենակատարներ Գագիկ Շիրինեանն ու Վարդան Էլմասեանը: Այդ անակնկալը ինձ մատուցելու համար, ինձնից զաղտնի, երգչախումբը փորձեր էր արել Կիրակի օրերին: Երեւակայի ուրեմն, սիրելի բարեկամ թէ ինչ ասել է նուիրում... ուրեմն եղել են շաբաթներ, որ երգչախումբը վեց փորձ է արել...

Գիտես արդէն, սիրելի բարեկամ, որ «գրսում» եղած ժամանակ, ազատ ժամերիս զբաղում եմ նաեւ գրականութեամբ: Այս անգամ իմ կարողութեան այս ճիւղը փոքր-ինչ կաղաց, որովհետեւ ինձնից հսկայական ժամանակ խլեց երգչախմբի համար նոր գործեր ստեղծելը:

«Գարուն», «Արմենիա» ամսագրերը, «Արմենիա» շաբաթաթերթը պարբերաբար տպագրեցին իմ՝ նախապէս գրուած յօդուածներն ու պատմուածքները: Ելոյթներ ունեցայ ռադիոյով եւ հեռուստատեսութեամբ, ղեկավարեցի Ս. Չատկուայ կոմիտասեան պատարագի երգեցողութիւնը առաջնորդանիստ եկեղեցում:

Հ. Կազմակերպչական որոշ դժուարութիւններու հակադէպ փորձերու ատեն եւ ի՞նչ կարգի:

Պ. Այո, ունեցանք: Համագրայինի Նայիրի Միութեան շէնքը միայն մէկ մեծ սենեակ ունի փորձերի համար: Այդտեղ են գործում նաեւ Արարատ մարզական Միութեան սեղանի թենիսի մարզիկներն ու սկաուտական խմբերը, որոնք ունեն իրենց կայուն օրերն ու ժամերը: Նորաստեղծ երգչախմբի համար հինգ օր յատկացնելը պարզապէս անհնարին էր, ուստի մեզ մնում էր փորձեր անցկացնել բաւականին անյարմար օտար սրահներում՝ նիւթական մէկ աւելորդ բեռ դնելով վարչութեան ուսերին: Եղան անշուշտ այլ կարգի դժուարութիւններ, բայց հաւատը, յաղթելու կամքը, հասարակութեան առջեւ պարզերես երեւալու ձգտումը մոռացնել տուին բոլոր դժուարութիւնները:

Հ. Գիտե՞նք, որ ձեր յոբելեանի առիթով մեծ պատիւներու արժանացաք Սիտնիի մէջ: Յոբելեանական երեկոյի ընթացքին բազմաթիւ խօսողներ եղած են: Ի թիւս անոնց,

գլխաւոր բնախօսը եղած է Աւստրալիոյ եւ Նոր Զելանդիայի թեմական առաջնորդ Ադամ Արք. Պալիօգեանը: Որքան որ գիտեմ, անակնկալ էր նման երեկոյի կազմակերպումը: Այդպիսի անակնկալ մը կը պատրաստուի՞ արդեօք հոս, Լոս Անճելոսի մէջ, ուր 30 տարի շարունակ հսկայ գործունէութիւն ծաւալած էք յանուն հայ մշակոյթի, յանուն հայապահպանման:

Պ. Օննիկ ջան, ի՞նչ իմանամ, ես չէ, որ պիտի ասեմ «յոբելեանս արէք»: Առայժմ ոչ մի միութիւն կամ կազմակերպութիւն այդ հարցով ինձ չի մօտեցել: Տեսնենք, ապագան դեռ առջեւում է: Հայաստանում նշուելու է, հաւանաբար Սեպտեմբեր ամսին, իմ՝ Արմէն Տիրանեանի «Դաւիթ Բէկ» օպերան ղեկավարելու օրերին:

Հ. 70-ամեայ Յերիկ Անասեան, այսօր երիտասարդի սիրտով եւ հոգով, դարձեալ կը գրէ, կը ստեղծագործէ, կը յօրհնէ, կը խմբավարէ, ի՞նչ ծրագրեր կը մտադրէք այդպէս իր միտքին մէջ:

Պ. Ծրագրե՞ր, որքան որ կ'ուզէք: Դեռ չի պատահել մի իրաւարուեստագէտ, որ կարենայ իր կենդանութեան օրօք իրականացնել իր բոլոր ծրագրերը: Արուեստը սահմաններ չի ճանաչում եւ ինչ էլ անես՝ անելիք միշտ կայ: Պարզապէս պիտի ջանալ ժամանակը ճիշդ օգտագործել, թէ չէ մէկ էլ տեսար «կանաչ տարածքը» դէմք չօքեց... եւ այն քեզնից հեռացնելու լաւագոյն միջոցը մշտապէս զբաղուած լինելն է:

Մօտակայ, գալիք ծրագրերի մասին կարծեմ վերեւում անցողակի շեշտեցի:

Հ. Ի՞նչ է ձեր կարծիքը եւ տպաւորութիւնները Աւստրալիոյ հայ համայնքի մշակութային, գրական եւ արուեստի մարմիններու գործունէութեան մասին:

Պ. Այն աշխոյժ, մշակութային եռուզեռը որ կայ Լոս Անճելոսում՝ որեւէ տեղ մի փնտռէք: Այս իմաստով, համեմատութիւններն անիմաստ են: Աւստրալահայ համայնքը կարօտ է ճշմարիտ, ազնիւ արուեստի արարումներին, թէեւ, պիտի խոստովանել, որ ունակ, կարող ուժեր քիչ չեն այդ համայնքում: Խնդիրը համագործակցութեան մէջ է, մի երեւոյթ, որի կարիքը ունի սփիւռքի ցանկացած համայնք: Անցեալ եւ այս տարուայ համերգների շունդալից յաջողութիւնը ապացուցեց, որ ունկնդիրների պակաս էլ չկայ Սիտնիի հայ համայնքում:

«Համատեղ», «միասին», «բոլորս» հասկացութիւնները պէտք է ամրակայուն Սիտնիի բոլոր կուսակցութիւնների, բոլոր մշակութային միութիւնների գործունէ-

ութեան մէջ: Որեւէ անհատ, բարձրորակ, մշակութային լիարժէք ձեռնարկ կարող է կազմակերպել այստեղ, եթէ, մասնաւոր, կազմակերպողը ճարպիկ, ձեռներէց անձ է ու բարեկամական լայն շրջանակ ունի: Վերջինս, անկասկած, չոյս է դնում նաեւ հայութեան թուաքանակի վրայ: Իսկ Սիտնիում «մէկ ծաղիկով գարուն» չի գայ՝ յատկապէս հայութեան թուաքանակի պատճառով: Այնտեղ այդ գարունը կը գայ միայն ճաշկերպութեամբ պարահանդէսի տեսքով, եթէ, ի հարկէ, հրաւիրովի մենակատարներ լինեն:

Ուրեմն, Սիտնիում պիտի աշխատել միայն ու միայն համագործակցութեան սկզբունքով: Ճիշդ է, այս ձեռնարկի կազմակերպման հիմնական բեռը ընկած էր Նայիրի մասնաճիւղի ուսերին (ատենապետ՝ Վաչիկ Վարդանեան, հիմնական պատասխանատու՝ Վահագն Նազարեան), սակայն, համագործակցութեան պակասը զգալի էր ամէն քայլափոխի:

Հ. Հիմնականին մէջ, սիրելի մայրս, մեր հարցազրոյցի առանցքը դուք եղաք: Անշուշտ մեզ կը հետաքրքրէ նաեւ Աւստրալահայ համայնքի վերաբերող այլ մանրամասնութիւններ եւս, ինչպէս ըստեք, այնտեղի մշակութային միութիւններու գործունէութեան, մամուլի, կամ եկեղեցական կեանքի վերաբերող հետաքրքիր տեղեկութիւններ: Եւ քակի որ վստահ եմք, թէ Սիտնիի հայ համայնքը Նորէն պիտի հրաւիրէ ձեզի, ուրեմն յաջորդ անգամ կը կեդրոնականք այդ հարցերու վրայ:

Պ. Օննիկ, սիրելի բարեկամ, առիթը եկաւ, որ քեզ շնորհաւորեմ Կիլիկիա քոլէճը ստեղծելու համար: Դու էլ, այսպէս կամ այնպէս մշակութային գործիչ ես, դու էլ քո ճամբով ես լծուած հային հայ պահելու սրբազան գործին: Իմ ապրած կեանքի յիստն տարների ընթացքին հնարաւորինս ջանացել եմ մշակութի միջոցով օգտակար լինել ազգիս:

Վստահ եղիր, որ ինչ որ մի օր, մի ժամանակ մեր գործունէութիւնն այս օտար հողում բերք չի տալու, որովհետեւ քարաւանները ետընթաց վարձով գնալու են հայրենիք՝ հայրենի ժողովրդի հետ համատեղ կերտելու մեր Ազատ ու Անկախ Հայաստանը: Եւ, եթէ այդ վարձի հեզասահ ընթացքին դոյզն չափով պիտի օգնի իմ երաժշտութիւնն ու արուեստը, ապա հանգիստ խղճով կարող եմ ասել, որ զուր չի անցել իմ եօթնասուն տարին:

Հ. Շնորհակալութիւն մայրս, որ Յերիկ Անասեան հաճելի գրոյցի համար:

ԱՊԱՔԻՄԱՆ ՄԱՂԹԱՆԵ

«Մասիս» շաբաթաթերթի բաժանորդ եւ բարեկամ, ծանօթ Տէրող Երցի Տիար Յակոբ Փափագեան, Յունիս 7, 2007-ին, Կլէնտէյլ Մէմորեալ Հիւանդանոցի մէջ սրտի վիրաբուժական յաջող գործողութենէ մը ետք տուն վերադարձած ըլլալով, ներկայիս կը բոլորէ ապաքինման շրջան մը: Այս առթիւ, ան շնորհակալութիւն կը յայտնէ Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան վարչութեան, Նորթ Հոլիվուտի Հայ Նազովրեցի Եկեղեցուն եւ բոլոր անոնց, որոնք հիւանդանոց եղած շրջանին իրենց արթններով եւ այցելութիւններով ամօքեցին իր ցաւը:

«Մասիս» կը մաղթէ իրեն արագ ապաքինում: Հիւանդանոցէ տուն փոխադրուելուն ուրախ առիթով, Յակոբ Փափագեան կը նուիրէ \$100 «Մասիս»ի ֆոնտին:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Գէւորգ Գալուստեան գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը եւ առողջ ուղղութիւնը \$100.00 կը նուիրէ թերթի ֆոնտին:

ՄԱՐԶԱԿԱՆ

**ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ
ՀՈՒՓՍԻՍԷ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆՆ ՆՈՒԵՃԵՑ
ԱՆՈՅԱՆՈՒԹԻՒՆԸ**

Ծանրամարտի Եւրոպայի ախոյեան-նուճի Հուլիսի մէջ Խոլըրշուդեանը հիւանալի հանդէս եկաւ նաեւ Պրահայում աւարտուած աշխարհի պատանեկան առաջ-նութիւնում՝ կրկնելով երկու ամիս առաջ Ստրասբուրգում ցոյց տուած նուաճումը: Մինչեւ 75 կգ քաշային ծանրորդուհիները մրցավէճում Հուլիսի մէջ մրցակցութիւնից դուրս էր եւ մեծ առաւելութեամբ յաղթող ճանաչուեց:



Առաջին վարժութիւնը նա սկսեց 103 կգ-ից, Հուլիսի մէջ 2-րդ փորձից իրեն ներկայացնելով ծանրաձողը եւ ապահովեց փոքր ոսկէ մետալը, իսկ երրորդ մտտեցմամբ բարձրացնելով 108 կգ, էլ աւելի ամրապնդեց առաջատարի դիրքը:

Հրում վարժութիւնում եւս հայ մարզուհիները վստահ հանդէս եկաւ: Նա յաջորդաբար յաղթահարեց 125, 131 եւ 137 կգ-անոց ծանրաձողերն ու երկամարտի 245 կգ (108+137) արդիւնքով հռչակուեց աշխարհի ախոյեանուհի: Բելառուսի Օլգա Նեդրոբեզովան յաղթողից հետ մնաց 16 կգ-ով՝ արժանանալով արծաթէ մետալի: Բրոնզը բաժին հասաւ քորիացի Լի էրային՝ 220 կգ (97+123):

Մեր մարզիչները մեծ յոյսեր էին կապել Ապրիլին Ստրասբուրգում անցկացուած ծանրամարտի Եւրոպայի մեծահասակների առաջնութեան ոսկէ մետալակիր Մելինէ Դալուզեանի հետ: Սակայն ցաւոք սպասելիքները չարդարացան:

Մեր մարզուհու ելուցի սկիզբը չուսադրող էր: Պոկում վարժութիւնը Մելինէն սկսեց 100 կգ-ից՝ բարձրացնելով այն: Սակայն յաջորդ երկու մտտեցումների ժամանակ 105 կգ-անոց ծանրաձողը չենթարկուեց նրան: Եթէ Մելինէն բարձրացներ ծանրաձողը, ապա պոկում վարժութիւնում կը դառնար յաղթող: Բաց նա ստիպուած էր բաւարարուել արծաթէ մետալով՝ ոսկին զիջելով քուլումբիացի Մերսեդէս Պերեսին, որը յաղթահարել էր 102 կգ-անոց ծանրաձողը:

Յաւոք, անյաջողութիւնները շարունակուեցին հրում վարժութիւնում: Մելինէն այդպէս էլ երեք մտտեցումների ժամանակ չկարողացաւ բարձրացնել պատուիրած 124 կգ նախնական քաշը եւ 0 ստանալով, դուրս մնաց մետալների համար մղուող պայքարից:

**ԲՈՆԵՊՐԱՄԱՐՏ
ԱՐԹՈՒՐ ԱՐԱՅԱՍԻ ՅԱՋՈՐԴ ՄՐՅԱԿԻՅԸ
ԽՈՒՐԷՆ ԳԵՒՈՐՆ Է**



Արթուր Արախանյան Խորէն Գեւոր

Առաջիկայում բոնեքամարտի հայ սիրահարներին բաւական հետաքրքրական իրադարձութիւն է սպասում: IBF-ի վարկածով միջին քաշում աշխարհի ներկայիս ախոյեան Արթուր Արախանյան իր տիտղոսի հերթական պաշտպանութեան համար կը մենամարտի իր հայրենակից Խորէն Գեւորի (Գէորգեան) հետ: Վերջինս ծնունդով էջմիածնեցի է եւ ներկայումս եւս բնակուած է Գերմանիայում (Համբուրգ): 28-ամեայ Խորէն Գեւորը IBF-ի վարկանիշային ցուցակում ներկայումս զբաղեցնում է 5-րդ տեղը եւ այդ կազմակերպութեան ղեկավարութիւնը թոյլատրել է նրան աշխարհի ախոյեանի տիտղոսը վիճարկել Արախանյանի հետ: Ինչպէս եւ 27-ամեայ Արթուրը, Խորէն Գեւորն էլ պրոֆեսիոնալ ունի մի քանի անգամ անպարտելի է: Անցկացրած 29 մենամարտերից 27-ում նա յաղթել է (15-ը՝ նոկաուտով), 2-ն աւարտել է ոչ-ոքի: Արթուր Արախանյանը յաղթել է բոլոր 23 մենամարտերում (18-ը՝ նոկաուտով):

Այս առնչութեամբ Խորէն Գեւորն իր գոհունակութիւնն է յայտնել, նշելով, որ վերջապէս հնարաւորութիւն տաացաւ վիճարկելու աշխարհի ախոյեանի տիտղոսը: Իսկ նրա մարզիչ Ֆրից Զոլունեկը համոզուած է, որ իր սանը բոլոր հնարաւորութիւններն ունի յաղթելու Արախանյանին. «Գեւորն արժանի է աշխարհի ախոյեանի կոչումը վիճարկելուն: Նա շատ յամառօրէն էր ձգտում դրան՝ մի քանի անգամ մօտ լինելով աշխարհի ախոյեանի կոչման համար մենամարտ անցկացնելուն: Եւ ահա նրա երազանքն իրականացաւ: Մենք շատ լրջօրէն ենք նախապատրաստուելու այդ մենամարտին, որպէսզի կարողանանք յաղթել Արախանյանին»:

Դէ ինչ, պրոֆեսիոնալ բոնեքամարտի պատմութեան մէջ առաջին անգամ աշխարհի ախոյեանի տիտղոսը միմեանց հետ կը վիճարկեն 2 հայ բոնեքամարտիկներ: մենամարտը կը կայանայ Օգոստոսին:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտպոլի առաջ-նութեան 38-րդ եւ վերջին հան-գրուանի մրցումներուն արդիւնքները



Ռէալ Մատրիտ նուաճեց Սպանիոյ առաջնութիւնը՝ լուսանկարին մէջ խումբի անգլիացի աստղ Տելիտ Պէքերմոք Յուլիս 21-եմ սկսեալ մաս պիտի կազմէ Լոս Անճելըսի Կալաքի խումբին

Յուլիս - Սարակոսա	1-1
Եսփանիոլ - Տելի. քորուճա	1-3
Ռէալ Մատրիտ - Մայորքա	3-1
Վալենսիա - Ռէալ Սոսիէտ	3-3
Կիմնասթիք - Պարսելլոնա	1-5
Սելթա Վիլո - Կեթաֆէ	2-1
Ռասիլ - Ռէալ Պաթիս	0-2
Օսասունա - Աթլէթ. Մատրիտ	1-2
Սելիլլա - Վիլաքալ	0-1
Աթլէթ. Պիլայաս - Լեվանթ	2-0

Առաջատար խումբերու դասաւորումը						
Ռէալ Մատրիտ	38	23	7	8	66-40	76
Պարսելլոնա	38	22	10	6	78-33	76
Սելիլլա	38	21	8	9	64-35	71
Վալենսիա	38	20	6	12	57-42	66
Սարակոսա	38	16	12	10	55-43	60
Վիլաքալ	38	18	8	12	48-44	62
Աթլէթ. Մատրիտ	38	17	9	12	46-39	60

ՐԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտպոլի առաջնութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Փիւնիկ - Բանանց	5-1	Հայաստանի ֆուտպոլի առաջնութեան 10-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները	
Կիլիկիա - Արարատ	0-4	Միկա - Փիւնիկ	1-2
Շիրակ - Միկա	1-0	Արարատ - Շիրակ	1-0
Գանձասար - Ուլիս	0-0	Գանձասար - Կիլիկիա	2-0
		Ուլիս - Բանանց	2-3

Խումբերու դասաւորումը						
	Խաղ	Յաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոչ	Միակոր
1. Փիւնիկ	10	8	1	1	24-6	25
2. Արարատ	10	7	1	2	16-2	22
3. Բանանց	10	6	2	2	16-10	20
4. Միկա	10	5	1	4	19-12	16
5. Գանձասար	10	3	3	4	7-6	12
6. Շիրակ	10	3	2	5	6-10	11
7. Ուլիս	10	1	1	8	5-25	4
8. Կիլիկիա	10	1	1	8	3-25	4

Յունիսի 13-ին ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հաւաքականների դասակարգման նոր աղիւսակը: 48 աստիճանով առաջընթաց է ունեցել Հայաստանի ֆուտպոլի հաւաքականը՝ 128-րդ տեղից բարձրանալով 80-րդը: Վրաստանը 97-րդն է, Ատրպէյճանը՝ 109-րդը, Թուրքիան՝ 21-րդը:

ԱՊՀ երկրներից ամենաբարձր՝ 13-րդ, տեղում է Ուկրաինայի հաւաքականը: Իսկ առաջին եռեակում են Իտալիայի, Ֆրանսայի եւ Պրագիլիայի հաւաքականները:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԻՎԱՌ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ մահուան տիտղոս առիթով հետեւեալ անձինք իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ առ այդ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կը կատարեն «Մասիս» շաբաթաթերթին:

Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան	\$100
Սահարա ճաշարան՝ Գիրգորեան եղբայրներ	\$100
Տէր եւ Տիկ. Պողոս Մարգարեան	\$50

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Օգոստոս 4	«Մասիս» Շաբաթաթերթի ճաշկերոյթ
Սեպտեմբեր 1,2,3	Յ.Մ.Մ. Փասատիմա եռօրեայ բանակում
Սեպտեմբեր 23	Հայաստանի Անկախութեան Օրուայ Փառատօն
Նոյեմբեր 4	ՄԴՀԿ-ի 120 Ամեակի Հանդիսութիւն

**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ՐԵՏ

Շարունակում է՝ էջ 15-16

րը, կը ցաւցնէին այտերս, բայց ձայն չհաննեցի: Մարդը շարունակ կը համբուրէր ու կու լար, իսկ մայրիկս կը փորձէր ժպտիլ, արցունքներուն մէջէն...

«Երկար չտեսեց այս վիճակը: Մուտքի գանգակը հնչեց եւ փողոցէն ներս խուժող աշակերտներու բազմութեան հետ, ես ալ մտայ դպրոց: «Իրիկունը հարցուցի մայրիկիս, թէ ո՞վ էր այն մօրուքաւոր մարդը:

«-Հայրիկիդ ընկերներէն է, եղաւ իր ժլատ պատասխանը, եւ զգացի թէ տրամադրութիւնը տեղը չէ: Ես ալ մխրճուեցայ սերտորոշեանս մէջ, եւ ա՛լ չխօսեցանք այդ մասին:

«Տարիներ ետք միայն հասկացայ այդ ճակատագրական պահին նշանակութիւնը, երբ պատմուեցաւ ինծի եղելութիւնը:

«Հայրիկս, խումբ մը ընկերներով, պատերազմի ամբողջ տեւորութեան, կը թափառի լեռներն ու ձորերը, երբեմն կուռելով, երբեմն պահուելով, լման տարի մը: Օր մըն ալ կը ձեռքաւորուին եւ կը նետուին Մարաշ քաղաքի բանտը, երեք ընկերներով: Հայրս կը մեռնի բանտին մէջ, եւ մեռնելէ առաջ կտակ կ'ընէ ընկերոջը, որ եթէ ապրի, եւ օր մը աշխարհի մէջ ողջ գտնէ իր մանչ գաւազը, համբուրէ աչքերէն եւ առնէ զրկին մէջ...

«Օրին, շատ ուժգին տպաւորութիւն մը չգործեց վրաս այս դէպքը: Զէի յիշեր արդէն հօրս դէմքը եւ մեր տունը: Բայց քանի տարիները անցան, այդ կարճատեւ պահը անջատուեցաւ մանկութեան յիշատակներէս, խտացաւ, ծանրացաւ, վէրքի մը պէս որ բուռնաւ կը կարծենք, բայց ատենը մէկ ցաւ կը պատճառէ եւ սրտի մորմոքում: Եւ մօրուքաւոր այն մարդուն յայտնութիւնը, որ պարզ միջոցով մըն էր, ժամանակի ընթացքին վերածուեցաւ մութ ճակատագրականութեան մը ազդանշանին: Ու երբ կը փակեմ թօշնած մանկութեանս այս մութ գիրքը, մուսլ ժպիտով մըն է որ կ'անդրադառնամ կեանքի եղերական խաղերուն, եւ դիպուածին անհետեւ թաւառուներուն: Ուրեմն, տարիներ շարունակ երբ որբանոցներն էի, տեղ մը հայր ունէի եւ որբ չէի, ու յատկապէս ա՛յն օրը, երբ որբանոցի հագուստին հետ կը կարծէի թօթափած ըլլալ նաեւ որբութիւնս, եւ քալել ընկերներուս հետ հաւասար, մօրուքաւոր այն մարդը եկած էր հեռուներէն, ըսելու համար, թէ հայր չունէի, եւ որբ էի...

Տարբ տարեկանին, դժուար էր հասկնալ կեանքը:

Ու քառասունին, դիւրին չէ կրել»...

Այս տխուր եւ սրտառու իջերը կը հաստատեն Անդրանիկի հօր՝ Թորոս Մառուկեանի նուիրեալ հայ հերոս մը ըլլալը, եւ թէ ինչպէ՛ս այդ հերոս հօր՝ արժանաւոր որդին, Անդրանիկ Մառուկեանը, անցեր էր որբութեան տաժանելի ճամբաներէն եւ իր նախախնամական բնատուր տաղանդով դարձեր էր հայ բանաստեղծութեան եւ գրականութեան դափնեկիր փառքերէն մին, դարձեր էր պարծանքը հայ ժողովուրդին:

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ԱՅԼ ԶԵՆՆԱՐԿՆԵՐԸ
Պարտինք չիւնէ հոս որ Անդրանիկ Մառուկեանի դասախօսական ձեռնարկներու նախօրեակին լոյս ընծայուեցաւ վեցերորդ տպագ-

րութիւնը իր «Թուղթ առ Երեւան» բանաստեղծութիւններու գրքին:

Նիւ Եորք բնակող յայտնի արուեստագէտ գծանկարիչ՝ Մինաս Մինասեան նկարազարդեց գիրքը: Այդ նկարազարդութիւնը կատարուած էր պատմական, ազգային եւ բանաստեղծի անձին կապուած պատշաճ մօթիֆներով: Շատ գեղեցիկ էին եւ շատ ճաշակաւոր Մինաս Մինասեանի նկարազարդութիւնները:

Ամերիկահայ ընթերցողներու կողմէ շատ մեծ ընդունելութեան արժանացաւ «Թուղթ առ Երեւան» բանաստեղծական գործը եւ սպառեցաւ ամբողջապէս:

Անդրանիկ Մառուկեանի երկրորդ դասախօսական ձեռնարկը տեղի ունեցաւ Նիւ Եորքի մէջ: Զեռնարկէն առաջ, եւ Անդրանիկը ծանօթացուցի Նիւ Եորքաբնակ ծանօթագային՝ բնիկ կիւրիցի Տատուր Տատուրեանին: Այս ծանօթութիւնը պատճառ եղաւ որ սերտ բարեկամութիւն մը ստեղծուի Անդրանիկ Մառուկեանի եւ Տատուրեանի միջեւ:

Տատուր Տատուրեան երկար տարիներ գորավիզ կեցաւ Անդրանիկ Մառուկեանի «Նաչիրի»ին եւ իր գրական գործունէութեանց:

Դասախօսական նման ձեռնարկներ տեղի ունեցան նաեւ հայաշատ շատ մը ամերիկեան քաղաքներու մէջ, ինչպէս Ֆիլադելֆիա, Տիթթոն-յիթ, Շիքսփո, Ուաշինկթըն, Գալիֆորնիոյ Լոս Անձելըս, Սան Ֆրանսիսկո եւ Ֆրէզնո քաղաքներուն մէջ:

Դասախօսական այս բոլոր ձեռնարկներն ալ պատկուցանան մեծ յաջողութեամբ:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅԻ ՔՐՈՋ ԷՆՏ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Ուղթորտունի մէջ, իմ հովուական պաշտօնավարութեանս օրերուն, շատ մօտիկ եղած էի եւ վահան թոթովենցի քրոջ՝ Զայնիկ թոթովենցի հետ, որ ամուսնացած էր պատուական հայու մը՝ Տօքթ. Յովհաննէս Ծովիկեանի հետ:

Վահան թոթովենցի իր «Կեանքը հին հոովմէական ճանապարհի վրայ» գրքին մէջ, հետեւեալ բառերով նկարագրած է իր այս քոյրը.

«Ինչքան եմ յիշում քեզ, կապուտաչեայ իմ քոյր: Քեզ յիշելիս՝ իմ հոգին լցում է պատկերներով. յիշում եմ մեր պարտէզը, կտուրը, ծաղկող աքացիան, յիշում եմ աշնան դեղին տերեւները, որ քամին քշում էր մեր դրան առաջ. յիշում եմ ձիւնի սպիտակ փաթիլները, այդ ձիւնի մէջ քո ոտոտտումները, եւ յիշում եմ մօրս վերջին մայրուքիւնը: Քեզանով վերջացաւ, կապուտաչեայ իմ քոյր, նրա կողերի խայտանքը: Ընդմիջ տուցեց նրա քնարը: Դու եղար վերջինը, որ ծծեցիր կաթը, դու մեր մօր վերջին մանուշակ, վերջին երգ, վերջին բերկրանք»:

Տիկին Զայնիկ թոթովենցի Ծովիկեան, մօր մը նման կը սիրէր զիս: Իր տունը քանի մը քայլ միայն հեռու էր իմ բնակարանէս: Գրեթէ ամէն օր կ'այցելէի իրեն: Ես եւս՝ երախտագէտ որդու մը նման կը սիրէի զինք:

Անդրանիկ Մառուկեանի իմ մօտ կեցութեան շրջանին, օր մը միատեղ գացինք այցելելու Տիկ. Զայնիկ թոթովենցիին:

Երբ որ հանդիպեցանք Տիկին Զայնիկ թոթովենցի Ծովիկեանին, Անդրանիկ Մառուկեան ուզեց իմանալ, թէ արդեօք ան ունէ՞ր որեւէ գիր, նամակ կամ գիրք վահան թոթովենցիին: Ո՛չ, ան չ'ունէր ոչ մէկ գիր, նամակ կամ գիր եղբորմէն: Բայց Նիւ Եորք

բնակող իր քրոջ աղջիկը՝ Տիկ. Պայծառ Շալեանը ունէր:

Այս տեղեկութիւնը բաւ եղաւ, որ Ա. Մառուկեան, երբ զնաց Նիւ Եորք, իսկոյն այցելեց Տիկ. Պայծառ Շալեանի բնակարանը եւ հոն անգտաւ վահան թոթովենցի անգտանելի գիրքը՝ «Կեանքը հին հոովմէական ճանապարհի վրայ»:

Դժուար եղաւ Տիկ. Շալեանի համար բաժնուիլ իր մեծ մօրեղբօր միակ յիշատակէն: Անդրանիկ Մառուկեան ունէր տաղանդը համոզելու տիկինը եւ տիրացաւ գրքին: Մնացեալը՝ յտակ է:

1955 թուին գիրքը հրատարակուեցաւ Պէյրութի մէջ, Անդրանիկ Մառուկեանի ձեռամբ: Հետագային, գիրքը երկրորդ անգամ եւս տպագրուեցաւ: Ապա թարգմանուեցաւ անգլերէնի եւ ֆրանսերէնի:

Այս գրքին հրատարակութիւնը եղաւ պատճառ, որ սփիւռքահայութիւնը մօտէն ճանչնայ վահան թոթովենցը եւ հիմնաւ այնպէս գրական անուրանալի տաղանդին վրայ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ ԵՒ ԵՍ

Օր մը, երբ որ առանձինն էինք տունը, իստեցայ իր հետ իմ կատարած գրական աշխատասիրութիւններուս մասին: Յայտնեցի նաեւ որ կարծ ժամանակ մը՝ աշակերտած էի Յակոբ Օշականին եւ իմ գրական մէկ-երկու փորձերս՝ արժանացած էին անոր գնահատութեան:

Ըսի Անդրանիկին որ «Հովուական վիպակներ» խորագիրով, գրած ունէի տասնեակ մը եւ աւելի պատմուածքներ, եւ թէ անոնցմէ մէկը կ'ուզէի կարդալ իրեն: Փափաքեցաւ:

Կարդացի իրեն մէկ պատմուածքս՝ որ «Մահուան սպասող երիտասարդ կնոջ մը» տրտում պատմութիւնն էր:

Ընթերցումէս ետք, Անդրանիկ Մառուկեան համբուրեց ճակատս եւ ըսաւ որ շատ հաւնած էր զայն, մէկ առ մէկ թուեց եւ գնահատեց վիպակին կառուցուածքը, լեզուն, զգայնութիւններն ու աւարտը: Թելադրեց որ անմիջապէս մաքուր ընդօրինակեմ ա՛յդ՝ եւ այլ պատմուածքներ, եւ տամ իրեն, որպէսզի հրատարակէ գանոնք «Նաչիրի»ի մէջ:

Անդրանիկ Մառուկեան, Պէյրութ վերադառնալէն ետք, «Հովուական վիպակներ» խորագրի տակ գրած պատմուածքներէս շարք մը լոյս ընծայեց իր «Նաչիրի»ներու մէջ՝ «Նարեկ Աբեղայ» գրչանունով: Ան նաեւ իր կողմէ պատրաստած ծանօթագրութեամբ մը ներկայացուցած էր զիս, որպէս լիբրալ գրող՝ որ կը քալէ հայ գրական անդասարանէն ներս, «առանց անթացուկի»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ

«Հովուական վիպակներս» մնացին ցիր ու ցան եւ անաւարտ: Յիր ու ցան մնացին նաեւ «Մանուկի մը օրագիրը» գրական երկս եւ այլ գրական աշխատասիրութիւններ:

Գրական գործերս եւ չկրցայ հրատարակել եւ շարունակել աւելի քան քսան տարիներ:

Հովուական ասպարէզէ հեռանալէս ետք, ապրուստի հոգեբով տուայտիլս, նաեւ անտեղի տաղտուկներով ծանրաբեռնուիլս եղան

պատճառ որ գրական հրապարակագրական ծառայութիւններէս ընդհատուիմ որոշ ժամանակ:

Եւ սակայն այն «տաղանդ»ը, որուն մասին անարկած է Տէրն մեր Յիսուս Քրիստոս, Աւետարաններու մէջ՝ Աստուծոյ կողմէ մարդոց շնորհուած նոյն «տաղանդն» է: Իմ պարագայս՝ գրական նկարագրով «տաղանդ»ն է որ պարգեւած է ինծի Աստուծոյ:

Այդ «Գրական Տաղանդը» թէ՛ եւ քիչ, բայց հոգիիս մէջ երկար տարիներ մնաց անեղծ, եւ ուժերուս ներած չափով բեղմնաւորեցի զայն ետքէն, եւ եթէ Աստուծոյ ինծի շնորհէ կեանք, օր մը լոյս կ'ընծայեմ նաեւ «Հովուական վիպակներ»ս, եւ «Մանուկի մը օրագիրը» գործերը, որոնք արգասիքն են այդ նոյն գրական «տաղանդին», որոնցմէ առաջինը Անդրանիկ Մառուկեան լոյս ընծայեց «Նաչիրի»ներու մէջ:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Իմ յուշագրական այս աշխատասիրութեանս սկիզբը յիշած էի որ Անդրանիկ Մառուկեան յետ եղեռնի մեր ամենէն տաղանդաւոր եւ բազմարդիւն բանաստեղծ-գրագէտը հանդիսացաւ:

Ան եղաւ վերապրած փառք մեր կորուսեալ Արեւմտահայաստանին:

Ես եղայ այն բախտաւորներէն որ մօտ եղայ իրեն եւ մօտէն ճանչցայ զինք:

Տիպար եւ առաքինի անձ մըն էր ան: Այր մարդու եւ հայ մարդու վալել՝ բոլոր յատկանիշները կը կրէր իր վրան:

Ան մարմնացումն էր քաջութեան եւ ուղղամտութեան: Ըմբոստ էր Հայաստանի լեռներուն պէս:

Իր ամենէն փայլուն յատկանիշը՝ Հայրենասիրութիւնն էր եւ Հայ գրականութեան հանդէպ տածած անհուն եւ անսակարկ սէրը:

Յիշատակներու մեծ ալիք մը կու գայ ողողել ողջ հովիւնս, երբ կը վերակոչեմ իր անմոռանալի անձը եւ իր անձին հետ կապուած դէպքերը:

Թող ներուի ինձ անգամ մը եւս յիշել հոս՝ զուտ անձնական դրուագ մը:

Ամերիկա տուած իր վերջին այցելութեան ընթացքին, միատեղ եղանք քանիցս:

Պատահեցաւ որ օր մըն ալ, իր պանդոկին մօտակայ տեղ մը քալենք միատեղ:

Յառաջացած տարիքի մէջ կը գտնուէր արդէն եւ դժուարութիւն ունէր քալելու:

Ուզեցի թեւը մտնել: Զուգեց: Կեցուց զիս եւ ըսաւ.

- Ո՞ք, Թե՛ս ՄՍԻՄ ՄՏՆԵՐ: ԻՆՍԻՆ ՆԵՅՈՒԿ ԵՂԻՐ ՄԻԱՅՆ:

Յետոյ կեցաւ պահ մը, եւ շեշտակի նայով աչքերուս, միշտ ժպտուն, աւելցուց հետեւեալը.

- Ե՛ի ԻՆՉ ՆԵՅՈՒԿ:

Ո՛վ սիրեցեալ եղբայր պատուական: Անմահ բանաստեղծ եւ ազնուական հոգի, համայն ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԴԻՆ է՛ ՔՈՒ ՆԵՅՈՒԿԻ:

Որովհետեւ հայութեան պարծանքն էս դուրս որպէս անփոխարինելի բանաստեղծ եւ գրագէտ, եւ որպէս Հայ Գրականութեան ԱՆԺԽՍԵԼԻ ՓԱՌՔԵՐԷՆ մին:

Չեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ,
Լուսաշող Ապագայ:



Proud Past,
Exciting Future.

AGBU SOCIETY DINNER - OCTOBER 13, 2007
HUNTINGTON RITZ CARLTON HOTEL - PLEASE MARK YOUR CALENDARS

AGBU Pasadena Chapter Cultural Committee

Presents

Art Classes

Bring out the inner artist in your child.

Raffi "Bo" Boyadjian, Instructor

Ages 6 and Up

LESSONS OFFERED EVERY FRIDAY NIGHT

Session One: 6:00 - 7:00pm

Session Two: 7:00 - 8:00pm

The Art Room - AGBU Pasadena Center

2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

For more information, please call (626) 794-7942

AGBU Pasadena Chapter

SUMMER BASKETBALL CLINIC

- Learn the game of basketball
- Improve your technique
- Make friends & have fun

TWO SESSIONS:

Session One: July 23 - July 27

Session Two: July 30 - Aug 3

NOON - 1:30 PM 8-10 yr. old Boys & Girls

2:00 - 3:30 PM 11-12 yr. old Boys & Girls

4:00 - 6:00 PM 13-14 yr. old Boys & Girls

ONLY 100 PER SESSION

Basketball T-Shirt Included

AGBU Pasadena Center

2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

SIGN UP NOW

Mon-Thurs 6-8 at the AGBU Center

For more information,
contact Mr. Hratch Mankerian at 626-705-2675



AGBU / AYA SCOUTS Glendale / Pasadena Chapter



SCOUTS SUMMER CAMP 2007

Lake Isabella / Kern County

August 4 - 12, 2007

Cubs, Webelos, Juniors & Brownies Ages 7 - 11

Boy Scouts & Girl Scouts Ages 12 - 17

*Join us now and attend
summer camp with the troop!*

"Havak" every Saturday 3:00 - 5:00 pm

AGBU Pasadena Center

2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

For more information, please call (626) 794-7942

AGBU GLENDALE / PASADENA CHAPTER YOGA YOGA YOGA COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED TO CHALLENGE YOUR MIND AND BODY!

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

LIMITED SPACES

For reservation or information, call A.G.B.U. office (626) 794-7942



THE QUALITY AND SAFE ALTERNATIVE FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

2007-2008 ACADEMIC YEAR

GRADES 9 - 12

For registration information, a campus tour and meeting with the principal, please call (626) 794-0363



AGBU SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

